



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1877 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Բ.

43 ՄԱՅԻՍ 1877



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻԲԱՅԻԼԵԱՆ

1877

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԵՅՈՒՄ 1877 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Բ.

13 Մ Ա Յ Ի Ս 1877

ՆԱԽԱԳԱՀ. — ԱՄԵՆ. Տ. ՆԵՐՍԷՍ Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇՍ. ԱՍԻԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ		22. Գլորիա Ստրամբուսեան	Բ. 2	Խոսկիւտար Ս. Կարապետ
ԵԿԵՆՆԵՍԻԱՆՔ		23. Խաչիկ Մանկասարեան	Բ. 2	49. Միշրան Պաշկեան
1. Խորէն Արքեպիսկոպոս Նար Պ. Ս	Բ. Պ	24. Կարապետ Ազարկանեան	Բ. 2	50. Յովհաննէս Ճիւղեան
2. Կարապետ Եղիսկոպոս Սեբեոսեան	Բ. Պ	25. Համբարձում Մազարեան		51. Կրկնորոս Աւանանեան
3. Մատթէոս ,, Իգմբրեան		26. Մինաս Գալաթեան		52. Տրդատ Փարսեան
4. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց		27. Յովհաննէս Պոլաճեան		
5. Գարեգին ,, Թաթարեան		28. Ն. Մէլքայրեան Տորթոբ	Բ. 2	(Գ. Վ. Ճանկ)
6. Եղիսկոպոս ,, Ապաշտեան		29. Պողոս Պատանեան		Բեկուս և
7. Խորէն ,, Կիրոսեանց		30. Սարգիս Ազարկանեան	Բ.	Գաւրիլ Գաւրիլ
8. Հմայեանկ ,, Գիմարեան	Բ.	31. Սահակ Աղոբ	Բ. Պ	53. Արիկ Ունեան
9. Յովհաննէս ,, Փարսեան		32. Աննաքերիմ Մանուկեան	Բ. Պ	54. Գրիգոր Ալեքսիսեան
10. Ներսէս ,, Ասլանեան	Բ.	33. Փէլաքեան Տորթոբ	Բ. 2	55. Մարտիրոս Յ. Տիւրեան
11. Պողոս ,, Խոլատեան	Բ. Պ	34.		56. Միքայէլ Մամիկոնեան
12. Արիտակէտ Վ. Մամբրեան	Բ. 2	35.		57. Նշան Բաղդադեան
13. Գլորիա ,, Արծրունի	Բ. 2	36.		58. Ստեփան Խնդրեան
14. Գրիգոր ,, Աճեան				59. Տեղեմար Մ. Էքսթրեան
15. Խորէն ,, Փէլէրիսեան		(Բ. Վ. Ճանկ)		60. Իլիաս Չոյեան
16. Յարութիւն ,, Արտիսեան		Պէլլիքոս		61. Յարութիւն Կորատունեան
17. Յովհաննէս ,, Մկրեան				62. Գրիգոր Մարտիրոսեան
18. Սուրբաս ,, Ստեփաննոսեան	Բ.	38. Աղոբեան Կրկնեան		Միքայէլ
19. Սահակ ,, Տ. Սարգսեան		39. Ալեքսան Խորատունեան		63. Կարապետ Պ. Պէրեանց
20.		40. Բարսեղ Հայանեան		64. Յակոբ Կորատունեան
ԱԵԻԱՐԷԱԿԱՆՔ		Ելեհիզարիու		65. Յակոբ Պ. Կորատունեան
(Ա. Վ. Ճանկ)		41. Չարեհ Գլորիա		66. Տիգրան Երատունեան
Գաւրիլոս, Կրկնիկ Գաւրիլ և		42. Միքայէլ Գիւրգիսեան		67.
Գաւրիլոսի Գաւրիլ		43. Պողոս Դամասկոսեան		Պէլլիքոս և Գաւրիլ
21. Գրիգոր Պէրոյեան	Բ. 2	44. Սեպուհ Մազարեան		78. Յ. Միշրան—Գուր
Բ. Բաղդադեան Ստեփան		Խոսկիւտար Ս. Խաչ		(Գ. Վ. Ճանկ)
Բ. 2 Բաղդադեան Երկրորդ		45. Յովհաննէս Շահեան		Գաւրիլոս և Իսախան
Բ. Պ Բաղդադեան Ստեփան		46. Սիմոն Յիւլիանեան		79. Յովհաննէս Կապեան
		47. Արտիս Պատանեան	Բ. Պ	80. Ստեփան Պէլլիքեան
		48. Ստեփան Արտանեան		

Գաւառացի	ԳԱՆԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մոլ
71. Կարապետ Շահապուհեան	Կարին	121. Ստեփան Պ Պ. Փախաղեանց
72. Մկրտիչ Մուրադեան	101. Մանուկ Առլանեան	Բ. Պ Տիկրիկ
Կարապետ	Բերքանա	122. Նշան Գարապուհեան
73. Յակոբ Ելմիկեան	102. Մ. Փախաղեան Տօթօր	Զէյրուկ և Մարտ
Երեմիանայի Սանարիոյ	Աղբիւրեան	123.
74. Օրմէ Խոճապարեան	103. Ռուբէն Կիւմրի շէրապեան	Բ. Պ Տրապիզոն
Թօփղաթի	Երեմիկի	124.
75.	104. Կարապետ Ա. Իւթիւնեան	Պարտաւ
Կոստ Ս. Էղիս և Ս. Ստուս	Այն	125. Տիգրանակերտ
ուսմանի	105. Պետրոս Միսրեան	126. Միշրան Չօպանեան
76. Գարեգին Յ. Մելիքեան	Զարանիսար	Վան
Գարուշիկ	106.	127. Սիմոն Մարտապեան
77. Աստիա Իկոստապուհեան	Արարիկ	Բ. Պ Աշրաւար
Հասար և Պոյսաճի դիւղ	107. Կարապետ Խաչիկեան	128.
78. Յովհաննէս Կոստեան	Բաղի	129.
Եր դիւղ և Սրէկիս	108	Հալից և Այրարաց
79. Ղազար Հովոսեան	Պարտա	130. Մկրտիչ Յ. Մելիքեան
Պարտա	109. Քրիստոստուր Ղազարեան	Ռուսուխ
80. Մկրտիչ Գ. Իսահան	Երեմիկ	131.
81. Յովհաննէս Կոստեան	110. Մեղիքոն Հարանեան	Կարս
82.	Անասիա	132. Աբրահամ Յ. Այվազեան
Բարակիտի	111. Համբարձում Ալանեան	Զեկիմադ
83. Յարութիւն Զեկիմադ	Բարս	133. Համբարձում Սարգիսեան
84. Յարութիւն Գ. Տատեան	112. Յովհաննէս Ազնուսեան	Բ. Պ Գաղատիս
(Ե. Վիմակ)	Երեմիկ	134.
Սանարիս	113. Յակոբ Իւթիւնեան	Ատանա
85. Ալեքսան Պէլիքեան	Մանգրի	135.
86. Ալեքսան Քոչուրեան	114.	Մրդերդ
7. Եղիսպար Մելիքեան	Հանք	136. Մատթէոս Ալիքսանեան
88. Միսա Ճափնաֆեան	115.	Էօզրատ
89. Յակոբ Բաղապուհեան	Երեմիկ և Բարերդ	137. Լօղօֆիթ Պաւլօղեան
90. Յակոբ Ամասեան	116.	Մարտիս
91. Նազարէթ Շահապուհեան	Թէրիքուղ	138.
92.	117. Տիգրան Գ. Սիմոնեան	Իդմիր
93.	Կեանքիս	Եղիսպատ
94.	118.	139.
Խաղաղի	Խաղաղի	140
95. Աստիա Ալիսոն Տիգրի	119. Յովհան Երեմեան	
96. Խաչատուր Պ. Միսրեան	Պարտիսար	
97. Ութիկ Պէլիքեան	120. Յովհաննէս Յովակիմեան	
98. Սարգիս Արապեան		
99. Սարգիս Արապեան		
100. Սիմոն Միքայէլեան		

ՕՐԱԿԱՐԳ


Ա. Վաղարշապատ Երեմիսիանական շնորհարանց և Բ. Կաղարիսի Մայր Գիտնիկն .

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Օրակարգին ձեռնարկելէ առաջ կարեւոր առաջարկութիւն մը ունիմ ընելու . կառավարիչ որ այսուհետեւ ժողովները Պատրիարքարանին մէջ գումարուին . վտան դի խել մը խօսքերու տեղի կորուսի ժողովները Ղարսի գումարուելուն համար. Ղարսի շոր չենք կառուցուելէ առաջ չին չենքին մէջ կգումարուելին Վարչութեան ժողովները , այս նոր չենքը տակաւին ամբողջացած չէ . Աղբիւրն ժողովը և Վարչական ճիւղերուն խորհրդարանաց վերաբերեալ մասը դեռ չչինուեցաւ . մեր կկարծէինք թէ արդէն կառուցուած նոր չենքին մէջ Վարչութեան ժողովը և խորհրդայնիստեան համար քանի մը սենեակ ունենալ իրաւունքինս է . բայց անցեալ ուրբաթ օր քաղաքաւարութեամբ մը արտարեսներն դիւղ , ըսել

է մեր հոս տեղ չունինք : Ուստի այսուհետեւ Վարչութեան ժողովներն ի Պատրիարքարան պիտի հրաւիրեմ , նոյնպէս Աղբիւրն ժողովը ալ . այսպէս զիսցած ըլլաք :

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Սրբազան Հօր առաջարկութիւնը ըսեցիք , այս խնդիրն ետքի կողմէնք , առ այժմ երեւոյթաբանական ընտրութեանց խնդրով պետք է զբաղուիք :

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Շնորհակալ եմ ձեր կողմէն :



Պ .

ՎԱԿԱՐԳԵՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՅԵ

Նախ Վարչութեան Բաղ. Ժողովին կողմէ եկած հետեւեալ ծանուցազրը կարգացուցաւ .

**Վսեմաշուք Ա. տեղապետ
Ազգային Ժողովոյ .**

Քաղաքական Ժողովս նկատելով որ մինչև ցարդ երեսօտխոսանական ընտրութեանց գործադրութիւնները Վարչութեան միջոցաւ կը կատարուէր և ընտրական գործողութեանց օրինակարարութեան բոլոր հանգամանքը յետ ստուգելոյ տեղեկագրով կը ներկայացուէր Ազգային Ժողովոյ . նկատելով որ այս սովորութիւնը բաւանալու և ընտրութեանց խնդիրն ուղղակի Ազգային Ժողովոյ վերածելու համար նոյն խի երեսօտխոսաններէն միոյն կողմէ առաջարկութիւն մը թէ և ներկայացեր և նախաձեռնութեան Վսեմաշին քննութեան յանձնուեր է, սակայն նոյն Վսեմաշին զխտորութեան վրայ թէ՛ Վարչութիւնն ընդհ. Ժողովոյ գործադիր պաշտօնէութիւնն ըլլալով, ընտրական գործողութիւնը անոր կը վերարեւին և թէ այս մասին նոր տնօրէնութիւն մը ընելու համար վերաքննութեան պահուն թողեր է այս խնդրոյն լուծումն, ինչպէս Ժողովոյ անցեալ 76 տարւոյ բացման Մարտ 16ի նստին ատենագրութիւնը կը հաստատէ, և հետևորար ընտրական գործողութեանց քննութեան Վարչութեան ձեռք կատարուիր շարունակուեր է . Քաղ. Ժողովս սոյն նկատումներով և մինչև ցարդ ՚ի գործ գրուած սովորութեան համաձայն՝ նախորդ նստին յատեան Ժողովոյ բերած էր միայն Պէշիկթաշի և Ելնիգարույի թաղից և Նիկոմիդիոյ վիճակի երեսօտխոսանական ընտրութեանց տեղեկագիրները յատուկ ծանօթագրով մը յաւելցնելով նաև թէ ուրիշ քանի մը թաղերէ ևս ընտրական տեղեկագիրներ հասած են, բայց անոնք քննութեան կարօտ ըլլալով չեն կրցած բերուիլ :

Սակայն որովհետեւ Ազգ. Ժողովոյ նախընթաց նստին մէջ զխտորութիւններ եղան թէ՛ Վարչութեան միջամտութիւնը միմիայն ընտրելութեան արցմանաց կէտին մէջն է, խի ընտրական գործողութեանց քննութիւնը Ազգ. Ժողովին կը վերարեւին, և որովհետև սոյն զխտորութեանց վրայ Վսեմաշին յանձնարարութիւն եղաւ մեզ մնացեալ ընտրական տեղեկագիրները ներկայացնել սոյն նստին, հետևապէս Քաղ.

Ժողովս կը վաճառեց ներկայիս յանձնել Վսեմաշին նոյն տեղեկագիրները հանդերձ սոյն ամեն բողոքագրերով և զխտորագրերով՝ որք յիշեալ ընտրութեանց կը վերարեւին :

- Յիշեալ տեղեկագիրներն են՝
1. Մայր Եկեղեցւոյ և միացեալ թաղից .
 2. Իւսիլուտար Սէլամիէ թաղին .
 3. Իւսիլուտար Ելնիմահալլէ »
 4. Թորգարույի »
 5. Պարտու »
 6. Մարտիոյ վիճակին .

Քաղ. Ժողովս ներկայ ծանօթագրին մէջ զայս և և թէ յաւելցնել արտօտ կը համարի թէ՛ սոյն թաղերէն որոց երեսօտխոսանական ընտրողաց թիւը բազմապատկուած ըլլալու մասին բողոք և զխտորութիւններ կան, Վ. Ազգ. արաց բաշխման ցուցակները թէ և քանիցս արհամարհուած՝ սակայն տակաւին հասած չըլլալով, չէ հասկցուած թէ նոյն թաղերու ընտրութեանց մասնակցողներն ըստ 65րդ յօդուածոյ Սահմանագրութեան ընտրողութեան հիմնուած 75 դրուշի տուրքը կարող և յանձնառու և են տալ թէ ոչ : Ուստի Քաղ. Ժողովս սոյն կէտին վրայ մասնաւորապէս Ազգ. Ժողովոյ ուղղորդութիւնը հրաւիրելով՝ բուսական կը համարի իւր կողմէն զիտեւ տալ և եթ՝ որ Սահմանագրութեան յիշեալ յօդուածին ճշգրիտ գործադրութեամբ՝ ոչ միայն օրինական զեղծմանց՝ այլև Կեդրոնական սնտուկին պատասխելիք մնասուց առջևն առնուած կրնայ ըլլալ :

Ազգ. Վարչ. Քաղաքական Ժողովոյ
Փոխ Ատենադպիր Փոխ Ատենապետ
ՅՈՎ. ՀԱՆՆԵՍՅԱՆ ՊՅՈՑԱԶԵԱՆ ՍԵՊՈՒՉ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ
13 Մայիս 1877

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս ծանուցագիրը գոր Վարչութիւնը կրերէ, արտասխան մ'է սոյն զխտորութեանց զէմ, որք նախորդ նստին մէջ Ժողովոյ կողմէ տեղի ունեցան ևս մնացած երեսօտխոսանական ընտրութեանց տեղեկագիրներու համար : Տեղեկագիրներն ալ եկած են արդէն, զորս սխտի կարգանք, բայց նախ Վարչ.

չուժեան ծանուցագրին վրայ եթէ զխտորութիւն ունեցող կայ, կհրաւիրեմ խօսիլ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՆ. — Վարչութեան ծանուցագիրը կըսէ թէ ընտրական գործողութեանց քննութիւնը Ազգային Ժողովոյ վերածելու խնդիրը վերաքննութեան արհուն թողուած է . իրա՞ն է այս, ուղղորդութիւնից կհրաւիրեմ սոյս մասին, որպէս զի հսկասութեան մէջ չըլլան ուրիշ, վասն զի անցեալ շարթու ասոր հսկասակն որոշեցիք :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ ԷՖ. — Քաղ. Ժողովը կըսէ թէ անցեալ 76 ի բացման մէջ որոշուած եղած է, բայց արարագանները չը յիշեցնէր . արդեօք կարելի չէ՞ կարգաւ և հասկնալ թէ ի՞նչ է այն որոշումը :

ԳԱՓԱՄԱԶԵԱՆ Մ. ԷՖ. — Քաղ. Ժողովոյ ակնարկած որոշումը իմ առաջարկութեանս կը վերարեւին . ես էի առաջարկող թէ ընտրական գործողութիւնը Վարչութեան ձեռքէն առնուելով ուղղակի Ազգային Ժողովոյս ձեռք կատարուին . այս առաջարկութիւնս Նախաձեռնութեան գիւտեմն յղուելով՝ նոյն Վսեմաշին և կամ տեղեկագրին վրայ Ազգային Ժողովս Վարչական կազմակերպութեան վերաքննութեանը թողած է . բայէք 76 մարտ 16 ի Ատենագրութիւնը, և հոն պիտի գտնէք նոյն որոշումը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Միայն թղթերը չեն որ պիտի խօսին, մարդ պէտք է պատասխանող Վարչութեան կողմէ . բայց դարձեալ Վարչութիւնը ներկայ չէ, այս քանի՞երրորդ անարգանքն է զոր կընէ Վարչութիւնն սոյս Ժողովին դէմ :

ԻՌԹԻՒՑԵԱՆ Կ. ԷՖ. — Ես ալ կը յիշեմ որ սոյնպիսի որոշում մ'եղած է արդէն :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Թող տեղեկագիրները կարգացուին, մինչև նայիք և գտնենք Ատենագրութեան սոյն որոշումը :

ԻՌԹԻՒՑԵԱՆ Կ. ԷՖ. — Ինչո՞ւ կարգացուին, քանի որ Վարչութեան թողուեր է անոնց քննութիւնը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նախ տեղեկագիրները լուրու ենք :

Տեղեկագիրներուն ընթերցումն սկսու . նախ իւսիլուտարի Ելնիմահալլէ թաղին տեղեկագիրը կարդացուեցաւ, որ է .

**Ատենադատի Ա. Պատրիարք Հայր
Նախագահ Ազգ. Ժողովոյ .**

Զեր Բարձր Սրբաշնութեան 56 համար և Փետրվար 17 ամսաթիւ պաշտօնագիրն ստացանք, որ թաղիս չորս երեսօտխոսանաց երկրորդ վիճակու դադարեալ լինելը, և յառաջ քան զՍ. Զատիկն նորոց ընտրութիւնը փութացնել կը ծանուցանէր . հետևորար Բարձր Սրբաշնութեան պաշտօնագրին համեմատ անմիջապէս Փետրվար 29 ին կիրակի օր թաղիս Թող. Խորհրդոյ անդամաց թուոյն վրայ թաղիս պատուաւոր ազգայիններէն վեց անձ յաւելով ըստ օրինի ընտրող . ժողով կազմուեցաւ . և հրաւիրուեցաւ յաջորդ կիրակի ի ժողով գումարիլ :

Ընտրող . ժողովս ի 27 փետրվարի կիրակի օր իւր առաջին նիստն ընելով՝ զիւտեւ կազմեց, և ընտրողութեան իրաւունք ունեցող բուսականաց ցանկը՝ որ 170 անձերէ կը բաղկանար, նոյնպէս և ընտրողաց որոշումը զիրացընելու համար ընտրելուց եռասարսիկ (12) թուովը ցանկ մը պատրաստեց, և զանոնք անմիջապէս զրու ի տես ժողովրդեան մինչ ութն օր, յորում ըստ հրահանգի ընտրող . ժողովոյս ընտրողաց ցանկին նկատմամբ հետզհետէ եղած զխտորութեանց վրայ ընտրողաց թիւը 183 ի յանգեցաւ . այսու ատենայնիս ընտրութեան հարահանգը տպեալ նամակօք Մարտ միկէն սկսեալ հաղորդեց քուէարկուաց՝ հրաւիրելով զանոնք, որ եթէ զխտորութիւն մը ունին, մինչև շաբաթ առաւօտ ներկայացնեն ընտրող . ժողովոյս . և Մարտ վեցին՝ կիրակի օր առաւօտէ սկսեալ մինչ ի ժամ վեց քուէնին անձամբ բերեն ի Թող. Խորհրդարան, և հոն ի ներկայութեան ընտր . ժողովոյս ընտրողաց համար պատրաստեալ ստամարին մէջ ստորագրութիւն .

Ես ալ կը յիշեմ որ սոյնպիսի որոշում մ'եղած է արդէն :

Թող տեղեկագիրները կարգացուին, մինչև նայիք և գտնենք Ատենագրութեան սոյն որոշումը :

Ինչո՞ւ կարգացուին, քանի որ Վարչութեան թողուեր է անոնց քննութիւնը :

նին դնելով՝ բուհատար ձգեն բուհնին, և եթէ ստիպողական սրտածառու նոյն օրը չկրնան անձամբ դալ, սխաբ է նամակառու ուղարկել. ծանոց նաև թէ, որոշեալ ժամէն անմիջապէս ետքը բուհնամարը պիտի սկսի:

Որոշեալ օրն (Մարտ 6 կիրակի) իներկայութեան Ընտրող. ժողովոյ ի թաղ. խորհրդարանի բուհարկութեան գործադրութիւնը կատարուելով՝ տեսնուեցաւ որ, 183 ընտրողներէն 97 միայն օրինուարուպէս մասնակցած են բուհարկութեան՝ 47ը անձամբ, և 50ը նամակառու. և թէպէտ վեց բուհնամակ ևս եկած էր, սակայն չարք անտարազիր նամակառու, և երկուքին ստորագրութիւնը անորոշ ըլլալով՝ անընդունելի համարուեցաւ. հետևաբար 97 բուհնամակով բուհնամարը կատարուեցաւ և որովհետև բոցարձակ առաւելութեամբ բուհնամարը չեղաւ, ուստի տարեալ նամակառու առաւելապէս բուհնամարը ընտրելեաց երկուստիկ թաղային հետեւեալ ցանկն հաղորդեց բուհարկուաց.

Մեծ. Նիկողոս էֆ. Ալաճաճեան	բուհ 46
» Պօղոս » Թորգոմեան	» 33
» Մ. Միշրան » Պէճէրլուէն	» 31
» Տրդատ » Փարսազեան	» 28
» Ալիբաբան » Սարայեան	» 27
» Յովհաննէս » Ճիլաճեան	» 26
» Սիմոն » Յէլէկեան	» 23
» Անրիկէն » Տօրթէօն	» 22

և ծանոց որ, ընտրողը այս երկրորդ անգամ ունի ընտրելեաց մէջէն միայն չորս անձ կրնան ընտրել՝ յայտարարելով միանգամայն թէ Մարտ 13ին ըստ առաջնոյն՝ բուհարկութեան և բուհնամարի գործադրութիւնը պիտի կատարուին:

Ըստ այսմ ի ներկայութեան Ընտրող. ժողովոյ Մարտ 13՝ կիրակի օր ի թաղ. խորհրդարանի բուհարկութեան գործադրութիւնը կատարուելով՝ տեսնուեցաւ որ, 183 ընտրողներէն 112ը միայն մասնակցած են բուհարկութեան՝ 50ը անձամբ, և 62ը նամակառու, յետո՛ւ անընդունելի բուհ երեք տեղի չունեցաւ:

Ուստի բուհնամարը կատարուելով՝ բուհից առաւելութեամբ Երեսօրհան ընտրուեցան

Մեծ. Պօղոս էֆ. Թորգոմեան,	բուհ 90
» Մ. Միշրան էֆ. Ալաճաճեան,	բուհ 77
» Տրդատ էֆ. Փարսազեան,	բուհ 60
» Մ. Միշրան էֆ. Պէճէրլուէն,	բուհ 56

որք երեսուն տարին կրացուցած, ընտրելութեան կրաւանց աէր, Օսմանեան հարստակ և Աղգ. գործոց հմուտ անձինք են:

Ընտրողական ժողովս այն նորընտիր Երեսօրհանաց ընտրութիւնը յատուկ նամակառու նուցանելով իրենց յանձնառութիւնը դրաւ ըստ ստացու:

Սրբազան Հայր, Ժողովս իւր սրտածնոր աւարտած, կը վաւերացնէ ընտրական գործադրութեանց տեղեկագիրը մատուցանել Չերդ Սրբազնութեան ի վաւերացումն:

Մնամբ խորին յարգանք Բարձր Սրբազան Մարտ 1877	նախեան Չերա՛մ
Ի դիմաց Ընտր. Ժողովոյ Իսկ. Նոր-Թաղի կախագան	
ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆՅ	
Ստեփանոս	Ստեփանոս
ՏՐԳԱՏ ՓԱՅԱՅԱՆ	ՆԵՊՈՂՈՍ Յ. ԱԼԱՅԱՏԵԱՆ

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՆ. — Աղգ տեղեկագիրը ծանօթագրութեամբ մի վարչութեան կողմէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բարձր տեղեկագիրներն եկած են թէ և, բայց վարչութեան կողմէ ծանօթագրութեան չունին:

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ. — Երբ ընտրական տեղեկագիր մը վարչութեան կողմէ, սահմանադրապէս անոր սրտաբն է քննել ընտրելոց ընտրելութեան սրտածնունդը և ծանօթագրութեան Աղգ. Ժողովոյ: Վարչութիւնն և թէ այս քննութիւնը չէ ըրած, սրտածնութեան մէջ կզանուի. վասն զի Սահմանադրութիւնն և կա-

նանադրութիւնը անոր յանձնած են այս գործը: Կերեի թէ վարչութիւնն իւր այս սրտաբնը չը կատարելու սրտածնութեամբ, զոր կինդրեմ որ յայտնէ. իսկ եթէ սրտածնութեամբ չի, նոր սրտածնութիւն մ'է ըրածը, կը խնդրեմ որ կրացունէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութիւնը միայն անցեալ 76 Մարտ 16ին նախն որոշումը կրացունէ մեզ իւր ծանուցագրին մէջ:

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ. — Վարչութիւնն իւր ծանուցագրին մէջ սրտածնութեան քննուելիք ընտրական տեղեկագրոց վրայ չէ թէ զի տողութիւն ընելու, այլ ընտրելոց հանգամանոցը վրայօր ծանօթութիւն տալու սրտածնութեամբ վարչութիւնը կամ իւր կատարելիք դերը չէ հասկըցած, և կամ հասկընալով հանդերձ անցեալ Ժողովոյ ըրած զխտողութիւնն իւր հանդիման հակառակ դառն, կերպի մը իւր Սահմանադրական սրտաբնը կատարելու մասին ունեցած զժկամակութիւնը կյայտնէ և բարձր տեղեկագիրները հոս կնեմէ, ինչ կողք չընէ ըսելու թէ: Այստեղ հանդերձ վարչութեան ծանուցագրին մէջ կէտ մը կայ որ նշանակութեան արժանի է, կընէ թէ բուհարկութեան մասնակցող ընտրողոց հանգամանքը քննութեան կարօտ է. վասն զի թաղ թաղ ընտրողաց թիւը բողմատակառած է. թէ և նոյն թաղից մէջ 75 զրը տարեկան տուրք վճարելու կարող նոյն թիւով անձինք գտնուիրը կասկածելի է: Բայց սակէ, վարչութիւնը 76 մարտ 16ին նախն մէջ երեսօրհանական առաջարկութեան մը վրայ Աղգային ժողովով եղած որոշում մը յիշեցնելով նոյն կէտերու քննութեանը մասնակցելու սրտածնութեան կողմէ: Ներքեւք որ այս մասին իմ կարծիքս բացատրեմ: Թէ և այս կարծիքս կարգացուած տեղեկագրին վերաբերութիւն չունի, բայց ըստ որում Սրբազան Հայրն ըստ թէ ուշագրութիւն ըրէք՝ չըլլայ որ ձեր որոշումներն իրարու հակադրուելու ըլլան, ուստի կընեմ նախ որ վարչութիւնը կիտարի երբ այսպիսի սրտածնութեամբ կիտարէ. վարչութիւնն իւր այդ սրտածնութեամբ կամ Սահ-

մանադրութեանն պիտի ստանա կամ կանոնադրութեանն և կամ այս Ժողովոց մէկ որոշումն. ստանցիկ դուրս որ և է մէկէ չկրնար սրտածնութեամբ: Աղգ. Սահմանադրութիւնը 81 յօդուածով կատարուել թէ՛ Վարչութեանը տեղեկագրերը կնեմիցայցնէ Քաղ. Ժողովին, որ « զանոնք քննելով կատարել երեսօրհանաց ընտրութեան սրտածնութեամբ »:

Ուրեմն Սահմանադրութիւնը բացարձէ այս կէտին մէջ, որ միմիայն ընտրելոց բողմատական վիճակին կը վերաբերի. վասն զի Սահմանադրութիւնը նախատեսելով որ ազգայնոց բողմատական վիճակին հանգամանքը Վարչութեանն իրենց հանգամանքի և ուրիշ արձանագրութիւններն միայն կրնայ ստուգուիլ, այդ կէտին քննութիւնը Քաղ. Ժողովին ձգած է. իսկ մը նայեալ կէտերն Աղգ. Ժողովին: Նոյնպէս Աղգ. Ժողովոյ կանոնադրութիւնն՝ որ Սահմանադրութեան վրայ հիմնուած է, սակի կը ձգէ այս սրտածնութեամբ. նախ տեղեկագիր մը սխաբ է կընէ Ընտրող. Ժողովին ընտրական գործադրութեանց վերաբերեալ, երկրորդ՝ ծանօթագրութեամբ մը սխաբ է կընէ Քաղ. Ժողովին՝ ընտրելոց Սահմանադրական հանգամանքն տարահարկ, և վերջապէս յանձնառութեան զիր մը ընտրելոց կողմէ: Աստիցմէ զատ՝ կրնայ Աղգ. Ժողովոյ որոշման իրենց զիրը, զոր վարչութիւնը կյայտնէ մեզ և կը կարծէ թէ Ժողովս Սահմանադրութեան և կանոնադրութեան այդ տարահարկութեանց հակառակ, որոշում մը ըրած ըլլայ: Ատե՛նագրութեան մէջ կարգացի նոյն որոշումը, ուրիշ բան չէ այն, բայց սա միայն՝ որ Քախամանեան է: Յիշտի առաջարկութիւն ըրեր է ընտրական գործադրութեանց կատարումն ուղղակի Աղգ. Ժողովոյ միջոցառ ընել տալ, և Ժողովն տար մէջ սկզբունքի կէտ մը նշանակելով վերաքննութեան սրտածնութեամբ ձգեր է. սա ընտրութիւններն ինք ընել տալու խնդիր է և չէ թէ ընտրական գործոց քննութեան խնդիր: Քախամանեան էֆէնտի ուղեր է Աղգ. Ժողովս ուղղակի յարարութեան մէջ դնել ընտրող մարմիններուն կամ թաղերուն հետ. զոր օրինակ, տեղ մը ընտրութիւն սխաբ եղած առնն ուղղակի Աղգ. Ժո-

զովն կամ անոր սահմանած մէկ ընտրական յանձնախմբին հրաման և հրահանգ զրկել նոյն տեղի Ընտրողական կամ Գաւառական ժողովին ևն . ասիկա տարրեր բան է . չկոյ որոշում մը որ ընտրական տեղեկագրոց քննութիւնը Ժողովոյ ձեռքէն առած և Վարչութեան յանձնած ըլլայ : Ասոնց ամենը մէկդի . Սահմանադրութիւնը մեր չտեղեկեցինք . նա կը տիրէ արդէն շատ ազգայ մէջ . կհարցնեմ , կրնա՞ք ցուցնել երկիր մը , աղբ մը , ժողովուրդ մը ուր Սահմանադրական ընտրութիւններն և միտնդամայն ասոնց քննութիւնը կառավարութիւնն իրեն սեղահականէ , և Աղբ ժողովոյ չգան , և անոր մէկ երկու նստերը չգրուեն : Եթէ ցուցնէք ասանկ երկիր մը՝ ես ետ կառնում բոլոր իմ խօսքերս . բայց կհաւատամ որ չսխալի կրնաք ցուցնել , ուրեմն ինչպէս կրնայ հանդուրժել այս Ժողովո՞ւ երբ իւր ընելիք մէկ գործն իւր ձեռքէն կատարել կուզուի . Վարչութեան Կրօն . և Քաղ. Ժողովներն իրենց Սրբազան Գլխով հանդերձ պատկասելի և վստահելի են մեզ համար , սա կայն այլ է վստահութիւնն և այլ է օրհնորահան կէտը . օրհնոր ընտրական գործոց քննութեան և վաւերացման պաշտօնը Աղբ ժողովին յանձնած և միայն գործադրութիւնը ձգած է Վարչութեան . Աղբային Ժողովին պաշտօնն է ընտրական տեղեկագրիները քննել և մերժել կամ ընդունիլ . մինչև իսկ ժողովս եթէ Վարչութենէն եկած ծանօթագրին վրայ կատած ունենայ , կարող է զայն ալ քննութեան ներքե ձգել մասնախմբի մը ձեռք : Ես շատ գոհ եմ որ ասի՞ տրուեցաւ մեզ այս կարևոր կէտին վրայ մի՞մարանիլ և ամենուն միտքը լուսաւորել . չմոռնամ նաև ըսելու որ ՚ի սկզբան մեր մէջն ալ այսպէս կը կատարուէր ամեն գործողութիւն . բայց վերջերը ղեղձում եղեր է . Վարչութիւնը Գործադիր յանձնախմբի մը ձեռք ամենայն ինչ գործէր , և ընտրութեանց միայն վաւերացումն և այն ո՛չ յետ քննութեան , այլ նոյն յանձնախմբին արժանի է ըսելուն վրայ , Աղբային ժողովով կատարել սովորութիւնն եղեր է . բայց ղեղձումն օրէնք չէ , պէտք է զայն բառնալ և օրէնքը սուլ տիրապետել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ նոյնը սխալ ըսելի՛ ինչ որ ըսաւ Ստեփան փառա սոյն ընտրական խնդիրներուն աթիւ . այն ղեղձումներն՝ որոց համար խօսեցաւ , արդէն սկսած էին գործադրուիլ 1870 թուականէն ի վեր . Սահմանադրութեան Գործադիր յանձնաժողով մը կար այն ատեն Վարչութեան կողմէ , որուն ես ալ անդամակցած եմ . անկէ միայն տեղեկագիր մը կուգար Աղբ ժողովին և վստահութեան քուէով մը կրնդունուէր կըմնար , զիտողութիւն մ'ալ ըլլար նէ միայն աս կէտին վրայ էր թէ՛ ինչո՞ւ համար 2 կամ 3 հարիւր ընտրող ունեցող թաղերու մէջ 10—20 ընտրողք միայն կմանակցին երեսօխմանական ընտրութեանց : Ասիկա Սահմանադրութեան դէմ ղեղձում մ'ըլլալը նոյն ինք Ստեփան փառան երեւան հանեց ասկէց առաջ . ես մտադրութիւն չէի ըրած այս կէտին մինչև այն ատեն՝ երբ լուսահողի Ռուսինեան էֆէնտիի շինած Կանոնադրութիւնն այս Ժողովին վաւերացման ներկայացուելէ առաջ մեր մէջ քննութեան տալիք . ես ըստ որում նոյն ամի Ժողովին ատենադպիրն էի , Սրբազան Հօր հրահանգը Ռուսինեան էֆէնտիի պատրաստած Կանոնադրութիւնը քննելու և Սահմանադրութեան հետ համաձայնեցնելու պահուն , լաւ կը յիշեմ որ մեծ մի՞մարանութիւն եղաւ մէջերնիս սոյն ընտրական գործողութեանց վաւերացման կէտին վրայ , և վերջապէս Սահմանադրութիւնը քրքրելով տեսանք որ ինչ որ ուրիշ ազգայ Սահմանադրութեան մէջ կայ , նոյնն է մերն ալ : Սահմանադրութեան 71րդ յօդուածը կըսէ թէ երկու տարին անգամ մը Պօլոյ թաղերուն կողմէն ընտրուելիք երեսօխմանայ հինգերորդ մասին համար՝ Պատրիարքը փետրվար ամսոյ մէջ ընտրող թաղերուն ամեն մէկուն կծանուցանէ քանի՞ երեսօխման ընտրելիքն՝ ընտրողութեան և ընտրելութեան սրտմաններն ալ յիշեցնելով , և այս ծանուցման վրայ թաղ. Խորհուրդներն երեսօխմանայ ընտրութեանը կծանարկեն : 81րդ յօդուածն ալ կըսէ թէ ամեն թաղ. Խորհուրդ՝ իր թաղէն ընտրուած երեսօխմանայ անունները Պատրիարքին կներկայացընէ մասնաւոր տեղեկագրով մը , որուն մէջ

պէտք է ճշդիւ նշանակուած ըլլայ ընտրեալներուն անունը , մականունը , բնակութիւնը , արհեստը և քուէարկութեան բոլոր սրտագաները , և Պատրիարքը այս տեղեկագիրը կներկայացնէ Քաղ. Ժողովին , որ զանոնք քննելով կատուէր երեսօխմանայ ընտրելութեան սրտմանները : Այս երկու յօդուածոց մէջ երկու բան միայն գտանք Վարչութեան վերաբերեալ , մէկն է հրահանգ զրկել թաղերը և միւսն՝ եկած տեղեկագրոց մէջ ընտրելոց հանգամանքը միայն ըստուգել . ասոր վրայ մեր ալ համոզուեցանք որ ընտրական միւս կէտերուն քննութիւնն այս Ժողովը պէտք է ընէ : Գալով Քառամասեան էֆէնտիի սոյն առաջարկութեան՝ զոր անցեալ տարի ներկայացուցած է յատենի Ժողովոյ՝ ընտրական գործողութիւնը Վարչութեան ձեռքէն առնելու և ուղղակի Աղբ ժողովոյ վերադրել տալու համար , զայն քննող Գլխանն՝ որոյ մէջ ես ալ կգտնուէի սոյն ատեն , Սահմանադրական կէտ մը նկատելի այն ատեն , Սահմանադրական խնդիր պէտք է մնայ վերաքննութեան պահուն : Կտեսնէք որ նոյն իսկ նախաքննիչ դիւանին բերած եզրակացութիւնը կհաստատէ թէ խնդրը Սահմանադրական է և անոր փոխօխմանը կրնայ ըլլալ : Երբ Սահմանադրութեան սոյն կէտը սրբադրուի , այն ատեն կրնանք ըսել թէ բոլոր գործողութիւնը պէտք է որ Վարչութիւնը կատարէ . իսկ հիմա քանի որ Սահմանադրութիւնը կմերժէ Վարչութեան միջամտութիւնն այս գործերուն մէջ , Վարչութիւնն ինքզինք արդարացնելու համար ինչ փաստ ալ բերէ , չենք կրնար ընդունիլ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ. — [Յանուկ Քաղ. Ժողովոյ] Կը խնդրեմ որ Քաղաքական ժողովոյ ծանուցագրին անգամ մ'ալ կարդացուի . որպէս զի լաւ հասկցուի թէ Վարչութիւնը իւր պարտքը կատարած է ընտրելոց սահմանադրական հանգամանքն ստուգած ըլլալով :

Սոյն միջոցին յիշեալ վարչական ծանուցագրի վերստին կարդացուելով , հասկցուեցաւ որ

ընտրելոց հանգամանքն ստուգուած ըլլալու կէտն անոր մէջ նշանակուած չէ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ. — Ծրագրին մէջ կար՛ լաւ կը յիշեմ . սպա ուրեմն մարտն ընդօրինակուած միջոցին մոռցուած է :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ . — Ի՞նչ հարկ խնդիրն երկարել . Քաղ. Ժողովը թո՛ղ բացարձակապէս յատենի ատո յայտարարէ ընտրելոց հանգամանքին ստուգուած ըլլալը , որպէս զի արձանագրուի , չէնէ մոռցուած է ըսելով չըմնար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կառաջարկեմ Քաղ. Ժողովոյ որ , քանի որ գրուած չէ ծանուցագրին մէջ , բանիւ թո՛ղ յայտարարէ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ. — Այո՛ , ընտրելոց հանգամանքն ստուգուած է և մեր ծանուցագրին մէջ սխալմամբ մոռցուած է , բայց կտրուէմ նկատողութեան առէք ընտրողոց հանգամանքը :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ . — Շատ աղէկ . կընդունինք այս յայտարարութիւնը : Քաղ. Ժողովը իր Տեղեկագրին մէջ Սահմանադրութեան 63րդ յօդուածը յիշելով մեր ուշադրութիւնը կը հրահարէ այս անգամ ընտրութիւն կատարուած թաղերուն ընտրողաց հանգամանքին վրայ , որոց թիւը բազմապատկուած է , կըսէ :

Այս ալ իրաւունք է . ընտրողաց թիւը բազմապատկուած ըլլալու կէտը նկատողութեան առնուք , բայց ի՞նչպէս հասկընանք ստուգութիւնը . ո՞ւր է պաշտօնական ցուցակն Կոստանդնուպօլսոյ Երեսօխմանական ընտրողաց . եթէ այսպիսի ցուցակ մը կայ պատրաստ , կազաչեմ որ մէջտեղ բերուի , որպէս զի բաղդատութիւն ընենք և արդարութեամբ վճիռ տանք : Իսկ եթէ չկայ , և Վարչութիւնը՝ որ տարիէ մը ի վեր պաշտօնի կոչուած է և ազգային ամեն իշխանութիւն իր ձեռքն ունենալով չէ՛ կրցած սոյն ցուցակը պատրաստել , ի՞նչ իրաւամբ Ընտրողական ժողովոյ առարկներ թէ « Չեր « ընտրողներն ընտրող չեն սահմանադրապէս » :

ի հարկի կը պարտաւորինք անոնց ցոյց տուած թիւն ընդունիլ, զի անոնց հաւատաւոր ժխտելու համար Արշաթեան կասկածը բաւական չէ, սրբապետական ճշգրիտ ցուցակ պէտք է և մեր դայն չունինք:

Գալով այն կէտին թէ ի՞նչ է Սահմանադրութեան 65րդ յօդուածին այն տրամադրութեան ողին՝ որ ընտրութեան իրաւանց հիմ կը սահմանէ 75 զրշի տարրը, այս կէտն ալ նկատողութեան առնելու ենք. տարրը սահմանադրական սրբապետ մըն է, և ընտրութեան իրաւունք ստանալու համար նուազագոյն չափ ընտրուած է 75 զրշի տարեկան տարրը. ասի սահման մըն է զոր Օրէնսդիրը դրած է ընտրութեանց կանոնադրութիւնը երաշխաւորելու համար, թէ և աւելի բանաւոր սահմաններ կրնան ընդունուիլ, բայց այսօր խնդիր չկայ օրէնք սահմանելու կամ տիրող օրէնքը բարեփոխելու. մեր սրբապետ ենք զայն գործադրել ճշգրիտ մինչև ի վերաբնութիւն, և թէ երբէք վերաքննութիւն պիտի ըլլայ. բայց օրէնքը գործադրելու միջոցին, տասին հետ ոգւոյն ալ թափանցել սրբապետին է. ի՞նչ է մեր օրէնքին ողին. թերևս կարծող ըլլայ որ ընտրութեանց քուէ տալու համար բաւական է որ մէկը 75 զրշ տարր տայ կամ ուրիշ բաւերով՝ 75 զրշ վճարէ և քուէ տալու իրաւունք չափ. ո՞չ ամենին, մեր օրէնքին ողին կը պահանջէ որ ընտրութեանց մասնակցելու այն անձինք միայն իրաւունք ունենան որ տարին զէթ 75 զրշ. տարր տալու կարող են և կուտան. այնպէս որ եթէ մէկը զայ ինձ ներկայանայ Ընտրութեան ժողովին մէջ և 75 զրշ սրտաբաւ դրամ ստջիւս դնելով քուէարկութեան մասնակցելու արտօնութիւն սրահանջէ, և ես զխոնամ որ նա 75 զրշ տարեկան տարր տալու կարողութիւն չունի, ընդհանրապէս մարապիկ է և թաղին օգնութեամբը կապրի, եւ չեմ կրնար անոր 75 զրշն առանելով քուէի իրաւունք տալ. ամենին ո՞չ, քուէն ստակով չը ծախսիր. քուէ տալու համար տարեկան 75 զրշ տարր տալու կարողութիւն ունենալու է և այն կարողութիւնը Թաղ. Խորհուրդը կը զմէն նիւ-

թաղէս կամ բարոյապէս երաշխաւորեալ ըլլալու է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Արշաթեանը մեղի բերած ծանուցադրին մէջ կրտէ թէ բողբոջներն ալ մէկտեղ կը ընդունուին. անցեալ նստին ալ ըսած է թէ բողբոջներ կային և անոր համար տեղեկագրերը չբերի: Ահապէս, Իսկիւտարի սոց ընտրութեան դէմ բողբոջողը կ'ոյ թէ ոչ. եթէ բողբոջ կայ, ինչո՞ւ չբերու անցեալ նստին սոց տեղեկագիրը, սրահանջ թո՞ղ հասկընք:

ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Օգտին է. Ֆէնտի անցեալ նստին ներկայ չըլլալով, չզիտէ եղածը. Արշաթեանն սրտաւր զրբ ունի եւ զեր, կարծելով թէ քննութիւնն իրն է. երբ ըսինք որ իրեն գործը չէ, այսօր բերաւ:

ԲԱԶԱԶԵԱՆ Յ. ԷՖ. — Փաշան ըսաւ թէ կսպակներ որ Արշաթեանն ուղիղ ցուցակ մը բերէր. միևնոյն սրահանջաւ է որ Արշաթեանն ընտրական գործողութիւններն յայտարարէ. եթէ ցուցակներն եկած ըլլային՝ գործը չէր յարողէր և այս խօսքերը տեղի չէին ունենար. Ընտրող. Ժողովներն ու Թաղ. Խորհուրդները պիտի ընէին զայդ և չըրին, փախաբեկի էր որ ընէին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներուի ըսել թէ Բաղ. Ժողովը առաջին սրտաւորութիւնն էր հող տանիլ Աղբ. Ժողովը ամբողջութիւնը լրացնելու. տարիէ մը ի վեր կրնար ընել զայս և չէ ըրած և այս սրտաւորութիւնն չիտարելը Ժողովը ընթացին արգելք եղաւ:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Բաշան ցուցակները չեկան, կըսուի, մինչդեռ երբեմն ալ և կարծեմ 1870 թուականին ուղուած են սոց ցուցակներն և ամեն թաղ շինած ու զրկած են. իսկ այս անգամ ընտրող ժողովներէն ուղուեցաւ, կըսէ, սխալ է, Ընտրող Ժողովներուն սրահանջը չէ սոց: Այսու հանդերձ Իսկիւտարի Եկեղեցական թաղի ընտրող Ժողովն իւր սրտա-

քը կատարած է 170 հարկ ցուցակ մը շինելով սոց վրայ ետքն մէկ քանիներ ալ ներկայանալով և զխաղութիւնն ընելով՝ ընդունուած և յարկեցած են: Արշաթեանը կրնար այս ցանկն ուղել և բողբոջուիլ: Ասկէց զատ՝ Սահմանադրութեան 65րդ յօդուածին վրայ չիտարութիւն մը ունիմ, երկու բան ըսած է, տարր և անձ. նական արժանիք, այս երկուքն իրարմէ տարբեր բաներ են, ըսել է թէ անոնք որ 75 զրշ տարր տալու կարողութիւն չունին, պիտի կըրնան ընտրութեան մասնակցիլ: Գծադրարար Արշաթեանն իւր զխաղողը մէջ միայն 75 զրշ տարր չիւած է. ինչո՞ւ Թաղ. Խորհուրդներէն չարահանջաւոր նաև անձնական արժանիք ունեցողներուն ցուցակը, սրտաւ զի օրինաց համայն ըլլայ: Այս անգամ, եթէ ներուի ինձ ըսել, Սրբապետ Հայր, ինչպէս որ Ձեր Արքայութիւնը գիտէ, զրկուած հրահանգաց մէջ ընտրութիւնները փութացնել կար. Ձեր հրահանգին համեմատ ընտրութիւնը փութացուցի և տեղեկագիրը զրկեցի, ցաւալի է որ այսօր հարկ կեներկայացուի հոս:

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Տեւորք Երեսփոխանք. Ազգի մը բարոյական մեծ նշանակութիւնը նորա օրինաց անվիւղ գործադրութեանը մէջ է զխաղողարար:

Օրէնքները կրնան աղէկ կամ գէշ ըլլալ. բայց քանի որ ազգային բարձր հեղինակութեամբ ընձուած կամ բարեփոխուած չեն, մեր ազգային բարոյականը կը սրահանջէ որ մեր օրէնքներն անթերի գործադրուին:

Այս նկատուած մեղի պէս միայն բարոյական ոյժ ունեցող ազգի մը համար յաւելտ սրտաւորիչ է և սրտաւորի Ժողովը մանաւանդ օրինաց անթերի գործադրութեանը մասին մեծ փոյթ ու եռանդ պէտք է ցուցնէ. սրտաւորի Ժողովը կ'ըսեմ, որոյ օրէնսդրական իրաւանցը լծորդեալ է նաև օրինաց սրահանջութեան անհանջելի սրտաւորութիւնը:

Մեծ ազգեր իսկ կրնան գէշ օրէնքներ ունենալ, զոր կը քննադատեն, հակառակ կը խօսին, ջերմ վիճարանութեան կ'ենթարկեն, բայց

ոչ որ կրնայ անոր մէկ նշանակեցն անգամ զանոց ընել. քանի որ օրինաւորապէս դադրած չէ զոր ծաղրութեան:

Եւ ինչո՞ւ, Տեւորք, շատ մը ազգեր խիստ խնամուած չընտրուցեցութեամբ սահմանադրական օրէնքներ հաստատեցին. ո՞չ սրտաւոր մասնակցներու կամայ և հանցից գերութեանն զիրենք ազատելու և օրինաց հաւատարմութեան ներքե տարելու համար:

Մեր ազգին մէջ ալ այս վերջին տարիներս օրինաց անթերի գործադրութեան մասին նշաններ տեսնուեցան և ասիէ 4-5 տարի առաջ բաւական մեծ յուզումներ ծագեցան, զորս յըզոյցողներն գտնէ իմ օրինաւոր սրահանջման ծայնակցելու սրտին ինձ ընելով, արդարատիրութեան և անկեղծութեան սրտաւոր մը կը հաստատեն:

Ձեմ ուրանար որ մեր ազգային Սահմանադրութեան մէջ բարեփոխութեան և մինչև իսկ ընձուած արժանի յօդուածներ կան, որոնց համար արդէն առաջարկութիւն ներկայացուցած եմ սրտաւորի Ժողովը:

Իմ առաջարկութիւններէն մէկն ալ Սահմ. 65րդ յօդուածին մէջ ընտրութեան սրտաւոր զրուած 75 զրշ տարրի խնդրոյն կը վերաբերի, որ հաւատարմութեան սկզբուն զխոսվին հակառակ է, որ զմարդն իր նիւթական կարողութեամբը միայն կը բարձրացնէ, ուրանալով անոր բարոյականն ու անձնական արժանիքը, և որ վերջնապէս զԱզգի իր նախնի անհաւատարմութեան վիճակէն նուազ տարբեր վիճակի մը կ'ենթարկէ, Ազգին ընտրական իրաւունքը սեղմելով, որ ոչ զատ Սահմանադրութեան մ'սկզբունք չկրնար ըլլալ երբէք:

Գիտեմ, ըսողներ պիտի ըլլան որ Սահմ. 65րդ յօդուածին տրամադրութեանն այնչափ մեծ ուշադրութիւն նուիրուած չէր. սակայն ներկէք ինձ ըսելու, Տեւորք, որ Ա-

Իմ առաջարկութիւնը՝ զոր սրտաւորի Ժողովը ընդունած՝ բայց սրտաւոր իր օրինաւոր լուծումն ստացած չէ. և Բ. սրտաւորի Ժողովը նախընթաց տարին տրոյց ստանձաններէ քուէարկած ամեն չիտարաց գտնէ ընձուել էր

քարձր հեղինակութեամբն յիշեալ անարդար սկզբունքը, զոր չարտարեւու առաջարկութիւն ներկայացուցին մեր մեծապատիւ սրտառնակիցներէն ամենք. հետեւորար այս ամենէն կը հետեւի որ Սահմանադրութեան 65րդ. յօդուածը տակաւին տիրող օրէնք է մեր օրինադրքին մէջ:

Արդ՝ քանի որ մեր մէջ բերած 65րդ. յօդուածին տրամադրութիւնն ըստ օրինի ընջուած չէ, քանի որ Պէշկիթաշ, Եջնի գաւառ և ուրիշ թաղեր նոյն յօդուածին տրամադրութեանն համաձայն ընտրութիւն կատարած են, քանի որ Մայր-Եկեղեցւոյ թաղին կարեւոր և օրինապահ մասը նախ քան դքսէարկութիւն բողոք բարձած նախապէս տրոյց բաշխման գործադրութիւն սրահանջած և 'ի հարկին' բողոքելով ձեռնարկ գրտնուած է քուէարկութեան միջոցին, և քանի որ սոյն օրինական բողոքանոց հակառակ՝ քուէարկութեան մասնակցողներէն դանկ 100 ին 20ը հազիւ 75 դրչ տուրք վճարելու յանձնառութիւնըն ստորագրած է յետ քուէարկութեան և բողոքող մասն առ հասարակ 75 դրչ ստորագրուած է տրոյց բաշխման գործադրութեանն առթիւ, որ դժբաղդարար յետ քուէարկութեան տեղի ունեցած է, ըսէք, Տեաւրք, պիտի կրնանք վճարել յանուն օրինաց թէ յիշեալ բողոքն անարտեհ է, անիրաւ է և կատարուած քուէարկութիւնն օրինաւոր և միանգամայն վաւերական:

Ես չեմ կարծեր որ իր խղճին հակառակ վարուող երեսփոխան մը գանձի մեր մէջ, և եթէ պատկառելի Ժողովդ առանց հետեւանքը նախատեսելու վաւերացնել ուզէ սոյն ընտրութիւնը, զոր չեմ յուսար, զիտէ՞ք, Տեաւրք, ինչ պիտի ըլլայ այն առեւ իւր տուած վճարն հետեւութիւնը. — կարծեմ հարկ չէ բացատրել ասոր տպաւորութիւնը:

Բայց ըսէք ինձ. Տեաւրք, ըստ օրինի ընտրութեան իրաւունք ունեցող ժողովուրդն ինչո՞ւ և ո՞ր օրինօք տուծէ ամանց թաղական խորհրդոց սրտառնակցութիւնը, մանաւանդ Մայր-Եկեղեցւոյ թաղական խորհրդոյն համար, կըսեմ, որ Վարչութեան ստիպողական հրահանգայն հակառակ՝ տրոյց բաշխման գործադրութիւնն յարադրեցնելով, թաղին օրինապահ մասին կողմն-

նէ. որ մեծ թիւ մը կը կապուէ, դժբաղդարար մոյն օրինական բողոքն յառաջ եկաւ:

Տակաւին կան ուրիշ սրտառնակներ ալ, որոնց մանրամասնութեանցը մէջ չեմ ուզեր մտնել. զի այս բեմն հանրական շահուց սրտառնակութեանը նուիրեալ է:

Ատարկողներ ըլլան դուցէ թէ սոյն ընտրութիւնը մերժելով, ընտրելոյ ինքնասիրութիւնը վիրաւորի: Չեմ բեր թէ ուշադրութեան արժանի սրտառոց մը չէ սոյն. բայց կը հարցնեմ թէ սոյն նկատուած արդեօք բաւական զօրաւոր փաստ մը կրնայ համարուիլ օրինական բողոքոյ ներքե կատարուած ընտրութիւն մը վաւերացընելու. — ես չեմ կարծեր որ հակառակը սնդողներ գտնուին, վասն զի ինչ որ ալ ըլլայ իրենց տեսակէտը, գործուած զեղծումը քաջալերելէ զատ՝ ուրիշ բանի չեն ծառայեր և հետեւարար չեմ կարծեր որ պատկառելի Ժողովդ ալ սրտառնակութեան մը պատճառաւ հանդիսապէս վաւերացնել ուզէ այնպիսի զեղծում մը, որ հարկաւ աստիճային ուրիշ զեղծմանց դռներ կը բանայ, մանաւանդ գաւառաց մէջ, ուր հակասահմանադրական դեր կատարողներուն թիւը դժբաղդարար մեծ տեղ մը կը բռնէ:

Տեաւրք, ես իսկ կը վկայեմ ընտրողաց արժանաւորութիւնը և կը յարգեմ նոցա արժանիքը, ուստի և չեմ կարծեր որ ընտրեալք իսկ հաճին ընդունել բողոքոյ ներքե կատարուած ընտրութիւնը մը, որ անշուշտ աւելի կը վիրաւորէ իրենց ինքնասիրութիւնը, մանաւանդ երբ վերահասու ըլլան ընտրութեան սրտառնակութիւն:

Ուստի եղբարիացնելով խօսքս և չափաւորելով կարծիքս, կառաջարկեմ, Տեաւրք, որ այն ընտրութիւններն միայն վաւերացնենք, որ գէթ օրինական բողոքոյ ներքե կատարուած չեն. ասով պատկառելի Ժողովդ օրինապահութեան դաս մ'ընծայած կ'ըլլայ ստորագրուելու սրտառնակից որ հարկաւ խիստ կարեւոր է, մանաւանդ այսպիսի համար:

Ահա, Տեաւրք, այս է իմ առաջարկութիւնը և այս իմ կարծիքս, որ հարկաւ պատկառելի Ժողովոյդ ալ կարծիքն է:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Սահմանադրութեան 65րդ յօդուածին տրամադրութիւնն ամենուրեւ ծանօթ է. ասիկայ օրէնք մ'է որ մեր վերայ տիրած է. և ինչպէս Ստեփան Փաշան և ուրիշներ ալ ըսին՝ սոյն օրէնքը մեր վրայ իբրև հարկ մը դրուած է, զոր և մեր սրտառնակներ առ հարկի ընդունիլ. եթէ սոյն օրէնքէն գոհ չենք, կրնանք վերաքննութեամբ չափաւորել զայն և բարեփոխել. բայց մինչև այն ատեն ճշգրտութեամբ գործադրելի է իբր տիրող օրէնք: Այժմ՝ ընտրական քանի մը անգլեկազգիներ կան, որոց մէջ երկու տեսակ բան կը տեսնենք. ընտրութեանց մէկ մասը՝ սրտառնակութեամբ բաշխման ցուցակաց համեմատ կատարուել է, և մէկ մասն ալ առանց բաշխման ցուցակի կատարուել է, ինչպէս որ Վարչութեան ծանուցադրին մէջ այս վերջին կարգէն եղողները համարուած են: Թէպէտև Գեր. Մատթէոս Սրբազան յայտարարեց թէ արդէն 1870 թուականին սոյն ցուցակներն անգամ մը շինուած և բոլոր թաղերէն Պատրիարքարան զրկուած են, սակայն անոնք չափաւորեցան և հինգ վեց տարի անցնելէ ետև նշանակութիւն չեն ունենար, զի երկու տարին անգամ մը պիտի նորոգուին ըստ Սահմանադրութեան: Վարչութիւնն ալ դանտիք նորոգելու հարկին մէջ դրեր է. տեղ անդ կատարել են, իսկ տեղ տեղ ալ ոչ. հետևապէս ընտրութիւններն ալ քանի մը թաղերու մէջ ճիշդ Սահմանադրութեան 65րդ յօդուածին համաձայն եղած են: Ես Պէշկիթաշի եմ, ինչպէս քարոզէ Սրբազանը կը վկայէ, որ Պէշկիթաշի մէջ ասիկայ քանի մը տարի առաջ 350 հոգի չափ ընտրող մասնակցած են քուէարկութեան. իսկ այս անգամ մինչև 100 ին ընջած է այս թիւը. պատճառն ուրիշ բան չէ, բայց եթէ տրոյց ճշգրտիլ. մինչև անգամ բողոքներ ալ եղած են կարծեմ, եթէ չեմ սխալիր, Սահմանադրութեան 65րդ յօդուածին տրամադրութեան սցապէս խտտութեամբ գործադրուելուն համար, այսպէս չէ՞ խորէն Սրբազան:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Այո, ճիշդ է: ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէշկիթաշի համար

բողոքազիր չկայ. կը սխալիր: ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ներեցէք. զուր իրաւունք չունիք զիս ընդմիջելու:

ԱՄԲԲՈՍԻՈՍ ԿՐԴ. — Կը նախատէք Ատենապետը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ նախատինք ինձի դէմ է, ես կը ներեմ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Չեմ նախատեր, այլ կը բողոքեմ զիս ընդմիջելուն համար:

Վերջապէս այս ամենը կը հաստատեն թէ երկու տեսակ ընտրութիւն կատարուած են. մեր մէկ օրէնք մ'ունինք, այն է Սահմանադրութեան 65րդ յօդուածը. ուստի մէկ օրէնքով պէտք է վարուին ամենն ալ. ապա թէ ոչ՝ զրկուելու չեն միւսներն ալ, ինչպէս են Պէշկիթաշի և Եջնիթաշի թաղերը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տակաւին երեք չորս ատենարան կան որ խօսք ուզած են այս նիւթին վրայ. եթէ անոնց ալ խօսել տանք՝ օրն իրիկուն կըլլայ. ուստի Ժողովին կը հարցնեմ թէ կուզէ՞ վիճարանութիւնը փակել:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԻՐ. — Բաւական չուստարուեցանք. բուէի դրէք:

ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Օրէնքը քուէի չի դրուիր. միւսնոյն գործողութեան համար ալ երկու կէտ չկրնար գործածուիլ. սակայն եթէ Սահմանադրութեան 65րդ յօդուածին դէմ զեղծում եղած է, ինչպէս կրնանք ըստուգել. Վարչութիւնը բերելու է իր սրտառնական բաշխման ցուցակը, որպէս զի բողոքատենք. եթէ ունի թնդ բերէ. իսկ եթէ ոչ՝ նա թող լուէ, մեր ալ մեր վաւերացումը կատարենք:

Պատողութիւնք սպասելով՝ Իսկիւտարի Եջնիսահալէ թաղին տեղեկազգիքը՝ եղած զի տողութեանց ներքե քուէի դրու Ատենապետ էֆէնարին:

Ժողովը 5 քուէի դէմ մեծամասնութեամբ

ԲՆԿՈՒՆԵՑ և վաւերացուց կատարուած ընտրութիւնն :

- Հետևապէս՝ երեսփոխան ՀՈՉԱՎՈՒՆՅԱՆ
- Պօղոս ԷՖ. Թորգոմեան
- Նիկողոս » Ալաճաճեան
- Տրդատ » Փափաղեան
- Միհրան » Պահճէգարուէան

Երկրորդ՝ Իսկիստարի Սէլափէ թաղին տեղեկազիրը և ընդ նմին նոյն թաղէն եկած մէկ բողոքագիրը կարգացուցան , որք են՝

Ստենագատիւ Ս. Պատրիարք Հոյր .

Թաղիս միճակաւ գողարեալ չորս Երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութեան համար Չեր Բարձր Արքայութեան 523 թուահամարու հրահանագրոյն համեմատ ըստ Սահմանադրութեան Ընտրող . Ժողով կազմուեցաւ և քուէարկութեան բոլոր նախաարտարաւորութիւններն ըստ օրինակ կատարուելով յիշեալ չորս երեսփոխանաց ընտրութեան համար առաջին քուէարկութիւնը տեղի ունեցաւ Մարտ 6 կիրակի օր 376 ընտրողներէն 57 անձամբ և 32ը նամակաւ , ընդ ամենը 89 քուէարկու մասնակցեցան ընտրութեան , քուէարկութիւնը սկսաւ ժամ 2 ին և դադարեցաւ 5 ին . այնուհետև քուէհամարի գործողութիւնը կատարուելով տեսնուեցաւ որ բացարձակ առաւելութեամբ միայն Ա. սեմ . Ստեփան փաշա Ասրանեան 84 քուէով Երեսփոխան ընտրուած է . հետևարար՝ միւս երեք երեսփոխանաց ընտրութեան համար՝ հարկ եղաւ երկրորդ տեղամ՝ համեմատական քուէարկութեան ձեռնարկել . ուստի մարտ 13 կիրակի օր քուէարկութիւն եղաւ առաւելագոյն քուէ ստացող հետևեալ վեց անձանց վրայ որք են ,

- 1 Գարրիէլ ԷՖ. Գրասէրեան քուէ 40
- 2 Ալէքսան » Սագաեան » 39
- 3 Թաղէոս » Պէկեան » 33
- 4 Գէորգ » Աստուլաս » 31
- 5 Սիմէօն » Ֆէլէկեան » 28
- 6 Գասպար » Չերազ » 23

Այս անգամ դարձեալ քուէարկութիւնն սկսաւ ժամ 2 ին և աւարտեցաւ ժամ 5 ին ,

քուէարկուաց թիւն էր 111 , 49ը նամակաւ , և 62ը անձամբ , ուստի քուէհամարի գործողութիւնը կատարուելով տեսնուեցաւ որ հետևեալ անձներ Երեսփոխան ընտրուած են թաղիս :

- Թաղէոս ԷՖ. Պէկեան քուէ 84
- Սիմէօն » Ֆէլէկեան » 81
- Գասպար » Չերազ » 74

Ընտրողական ժողովոյս Նախագահը ինչպէս որ օրէն է , յիշեալ անձանց ընտրութիւնը իւրաքանչիւրին հաղորդելով և իրենց կամքն ու հաւանութիւնը խնդրելով , Թաղէոս ԷՖ. Պէկեան և Ստեփան Փաշա Ասրանեան , և Սիմէօն ԷՖ. Ֆէլէկեան ծանուցին գրով թէ սոյն ընտրութիւնը և թաղիս Երեսփոխանութիւնը կը ընդունին . խօհ Գասպար ԷՖ. Չերազ յայտնելով գրով թէ ինքը միայն 27 տարեկան ըլլալով չկրնար Երեսփոխան ըլլալ ըստ Սահմանադրութեան , հետևարար Ընտրողական ժողովս յիշեալ ԷՖ. Ֆէլէկեանէն ետքը առաւելագոյն քուէ ստացող գտնելով Գրասէրեան Գարրիէլ ԷՖ. նմա ծանուցց գրով իր Երեսփոխան ընտրուած ըլլալը և նա ալ հաւանելով յանձն առնուլ սոյն սրաշտոնս : Ընտրողական ժողովս կը փութայ ներկայ տեղեկագիրս ուղղել Չեր Բարձր Արքայութեան պարտ ու պատշաճը անօրինելու համար :

3 Ապրիլ 1877 ՆԱԽԱԳԱՀ
 Իսկիստար Սէլափիէ Ընտր. Ժողովոյ
 Ս . Խաչ Թաղ Եւ Քարողիչ Ս . Խաչ
 Եկեղեցւոյ
 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ . ՓԱՓԱՉԵԱՆ
 'Ի դիմաց Ընտրողական ժողովոյ
 Ստենագոյի Ստենագոյն
 Հ . Ս . ԱԼԱՃԱՃԵԱՆ Ա . ԵՍՉՄԱՃԵԱՆ

ԲՈՂՈՔԱԳԻՐ

Իսկիստար Ս . Խաչ Բաղէն

Վսեմաշուք Ստենագոյեան Ս. Պօղոսի Երեսփոխանական Ժողովոյ .

Թաղիս Երեսփոխանական ընտրութիւնը արդէն կատարուեցաւ թաղեցւոցս վստահութիւն

նը գրաւող և արժանաւոր անձանց վրայ , որով մեծապէս գոհ եղած էինք ընտրողքս : Բայց այժմ՝ ցաւելով լսեցինք թէ ընտրեալ Երեսփոխաններէն Չերազ Գասպար ԷՖ. նախ հրաժարական մատուցեր է , չենք գիտէր ի՞նչ սրտածառաւ , և կը լսենք որ ըստ Վարչական հրահանգի նորա յաջորդը պիտի առնուի եղեր , Գրասէրեան Գարրիէլ ԷՖ. նախ :

Ստորագրեալ ընտրողքս եթէ մեծամասնութեամբ այն վստահութիւնը ունենայինք Գարրիէլ ԷՖ. նախի վրայ ինչ որ թաղիս Երեսփոխան ըլլալիք անձին վրայ ունենալու անհրաժեշտ պէտք կը տեսնենք , մեր քուէները մատուցելու կուտայինք յիշեալ Գրասէրեան ԷՖ. նախ . հետևաբար երբ ընտրողաց մեծամասնութիւնը այդ վստահութիւնը չէ ունեցեր նորա վրայ , նորա արդի յաջորդական ընտրութեան դէմ բողոքելու իրաւունք կ'ստանամք :

Հրահանգին այս մասին ունեցած տրամադրութիւնն ալ աչքէ անցնելով կը տեսնեմք որ զիւրութեան համար առաւել այդ միջոցը որոշած է քան թէ իրաւունքի մը համար . և այսպիսի յաջորդական ընտրութիւնները առ Վարչութիւնն ծանուցանելու անհրաժեշտ պարտականութիւն մը դրեր է Ընտրողական ժողովոյն վրայ , որով կը յայտնէ թէ այդ յաջորդական ընտրութեան վրայ որ և իցէ զխտորութիւն կամ բողոք լսելի պիտի ըլլայ օրինաց առջև : Բնականաբար երբ սցալիս յաջորդական ընտրութեան մը վերայ , ընտրողներէն որ և է զխտորութիւն կամ բողոք ըլլայ , ինքնին ընդունած պիտի համարուի ընտրողաց մեծամասնութենէն , և անատեն օրէնքը պիտի կարենայ հաստատել այդ յաջորդական ընտրութիւնը : Արդ Ս . Խաչ թաղի ընտրողքս Գարրիէլ Գրասէրեան ԷՖ. նախ յաջորդական ընտրութեան դէմ կը բողոքեմք և կը սրահանջեմք որ կրկին քուէարկութիւն կատարուի , ինչպէս որ պիտի կատարուէր , երբ Չերազ ԷՖ. նախ Երեսփոխանութիւնը ընդունելէն յետոյ հրաժարէր : Նոր ընտրութեան ձեռնարկելու մասին դժուարութիւն մը չկայ ընտրողացս համար և կ'սպասեմք որ ժամ յառաջ քուէարկութեան հրահանգը ընդունինք , սոյն բողոքագիրնիս կը ներկայացնեմք Ընդհանուր Ժողովոյք և կը խնդրեմք որ նկատուի թէ իրաւունքը չէ թէ ընտրելոյ դէմ , այլ Վարչութեան հրահանգին դէմ կը բողոքեն : Վարչութիւնն ս'ըսիէ տուեր է այդ հրահանգը :

Կոյտոյններ Ընդհանուր Ժողովոյք և կը խնդրեմք որ նկատուի թէ անուշ բարեհաճիք :

7 Մայիս 1877 [53 Մտարագրութիւնք]
 Իսկիստար Սէլափիէ

Ստենագոյեան ԷՖ. նախի ի զխտորութիւն հրահանգը երեսփոխաններն :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ . ԷՖ . — Կարգացուած բողոքագրէն կը տեսնուի որ բողոքարկուք չէ թէ ընտրելոյ դէմ , այլ Վարչութեան հրահանգին դէմ կը բողոքեն : Վարչութիւնն ս'ըսիէ տուեր է այդ հրահանգը :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ . — Սոցեալ շարժու ի բացակայութեան Օղտէն ԷՖ. նախի այդ հրահանգին կէտն ալ զխտորութեան առնուած և որոշուած է . ուստի անոր վրայ կրկին դառնալն աւելորդ կը համարիմ :

Խօհ բողոքարկուաց խնդրոյն գալով , թէ պէտ և Սէլափիէ թաղին ընտրութեան վրայ խօսք ընելու իրաւունք չունիմ , զի ընտրեալներէն մէկն ալ ես եմ , բայց որովհետև անցեալ շարժու միջոցն եղանակաւ ընտրեալ երեսփոխան մը իմ առաջարկութեամբս էր որ ընդունուեցաւ իւր անձնական յատկութեանցը համար , նոյնպէս կառավարիմ նաև Գրասէրեան ԷՖ. նախի ընտրութիւնն ընդունելու իւր բարեմասնութեանցը համար հակառակ բողոքոյ թաղեցւոց մէկ մասին :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ . ԷՖ . — Միևնոյն առաջարկութիւնը՝ զոր Պաշան ըրաւ այս խնդրոյն վրայ , ես ալ պիտի կրկնեմ . բայց անից առաջ երկու կէտ կայ , որոց վրայ սրաշտոնակցոցս ուշադրութիւնը կը հրաւիրեմ . երկուքն ալ ըստ իմ ընտրական խնդրոյն մէջ օրէնքին տրամադրութիւնը յարգելու սկզբունք կը վերաբերին : Նախ տեսնեմք որ Ժողովն անցեալ նախնի ի վեր ընտրողական իրաւունք հիմը քննութեան կառնու և այնպիսի կէտերու վրայ կը դադարի որ՝ եթէ սրապ ժամանակ կը վստահ , ըսուի , ես ամենէն կարևոր խնդիրն է պիտի ըսեմ : Ինչպէս որ մինչև ցարդ խոստովանած եմք և պէտք է խոստովանիմք որ մենք Սահմանադրութեան գործադրութեանը մէջ չունինք տակաւին կատարեալ

փորձառութիւն, և այս վերջին մէկ երկու տարիներէն ի վեր է որ մասնաւոր սկսանք համարել և կատարեալ գործադրութեանը ջանալ: Աւստի և ներկէի է անշուշտ որ երբեմն մէջերնիս տարբեր կարծիքներ դառնալին: Իմ կարծիքս այս է որ երեսփոխանական ընտրութեան համար սկզբնական երկու կարեւոր կէտեր կան, մէկն է 75 դրուչի ընտրողական տարբը և միւսն անձնական արժանիքը, այսինքն՝ թէպէտ և 75 դրուչ տարբը տարւած անկարող է, սակայն իւր արժանիքը Ազգէն կը ճանչցուի: Մինչև հիստորիկութիւն կար այս երկու կէտին մէջ, այժմ պարզուած է: Երկրորդ՝ տեսանք որ ընտրական գործողութեանց համար Արջութեան կողմէ զրկուած հրահանգաց մէջ այնպիսի կէտ մը կայ, որ օրինաւորութեան հակառակ է, այն է յաջորդական ընտրութեան կէտը: Նախորդ նախին մէջ, սեր Օգսէն էֆէնտին ներկայ չէր, այս կէտը նկատողութեան առնելով՝ ընտրելոյն անձնական հանգամանաց և իրեն յանձնառութեան նամակ գրուած ըլլալուն պատճառաւ իբր վերջին բացառութիւն ընդունուիլ հարկ համարուեցաւ: Այժմ որովհետեւ Գրասէրեան էֆէնտին ընտրութիւնն ալ այն վիճակին մէջ կը ներկայանա՞ մեզ, որ տակաւին նախորդ նախին սրտումն տեղի ունեցած չէր, ուստի այս ալ նախորդ նախին որոշման սկզբունքին տակ կրնանք ընդունիլ առանց միւս անգամ շարունակուելու, և վճռել միանգամայն որ այսուհետեւ ուր որ ընտրութիւն ընել հարկ ըլլայ, նախ 75 դրուչ տարբը կարողութիւն և անձնական արժանիք ունեցողաց ցուցակը շինուի և ետքն ընտրութեան ձեռնարկուի: որպէս զի 75 դրուչի տրոյց մասին թէ՛ զեղծումներուն առաջն առնուի և թէ՛ Արջութեան Պատճէին փնաս մը չհասնի: Իսկ այս անգամի ընտրութեանց առթիւ քուէ տուողներն 75 դրուչնոց ցուցակին մէջ անցնին այս տարուան համար, չէ նէ արդէն վճարողներն կուգան կը բողոքեն և Արջութիւնն անոնց դէմ ըսելիք մը չկրնար ունենալ:

[Հասանութեան ցոյցեր]

Առնապատ էֆէնտին տեսնելով որ արիւշ

դիտողութիւն ընող չկայ, քուէի դրու Սերա միէ թաղին ընտրական տեղեկագիրը, զոր Ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ և վաւերացուց կատարուած ընտրութիւնը:

Հետեւապէս երեսփոխան ՆՈՉԱԿՈՒՆՅԱՆ:

Ստեփան Փաշա Ապրանեան
Թաղէոս էֆէնտին Պէլեան
Սիսէօն » Ֆէլէկեան
Գարրիէլ » Գրասէրեան

Ասոնցմէ Ֆէլէկեան էֆէնտին ունիւրդաց մէջ գտնուելով, Սրբազան նախագահին հրատարակուած փրոյց անմիջապէս ներկայութեան տուած մարն ստորագրելէ ետեւ բազմեցաւ ի շարս երեսփոխանաց:

Երրորդ՝ Մայր եկեղեցւոյ և միացեալ թաղից ընտրող ժողովոյ տեղեկագիրը և ընդ նմին ներկայացեալ 3 բողոքագիրը կորզացուեցան, որք են:

Առնապատիւ Սրբազան Հայր
Նախագահ Ա. Ղ. Երեսփ. Ժողովոյ

Ձեր Բարձր Սրբազնութեան փետրվար 17 և փետր. 26 թուականաւ կրկին սրտածնագրերը ընդունելով, որով Ձեր Սրբազնութիւնը Մայր եկեղեցւոյ, Կէտի Փաշայի և Գուճաբայի դրոյ միացեալ թաղից երեսփոխաններէն Խօրատանձեան Յովհաննէս, Քէրէստէձեան Պետրոս և Սուրէնեան Յովհաննէս էֆէնտիններու հրաժարումը և Ռուսիեան Նահապետ էֆէնտինի վախճանիկը կը ծանուցանէր և նոյս տեղ նոր ընտրութիւն ընել կը հրամայէր, անմիջապէս երեք թաղերէ խառն ընտրողական ժողով կազմուելով, ընտրական գործողութեանց ձեռնարկուեցաւ:

Նախ երեսփոխանական ընտրողաց և ընտրելուց ցանկերը պատրաստուելով (ընտրողաց ցանկը իւրաքանչիւր թաղի Թաղ. Խօրհրդոց վերակայութեանը համեմատ շինուած է) օրի որ առաջ եկեղեցւոյ բակը կախուեցան ի տես և ի զիւրութիւն ընտրողաց, հրատարակուի ընտրողները որ իրենց դիտողութիւնը, եթէ ունին, ներ-

կայացնեն ընտրողական ժողովոյ մինչև ուրբաթ երեկոյ: Այս միջոցին տասն և մէկ ընտրողաց կողմանէ բողոքագիր մը ներկայացուեցաւ, և թէև դիտողութեանց ժամը լրացած և անցած իսկ էր, սակայն ընտրողական ժողովը չը վարանեցաւ ներկայացուել բողոքը դիտողութեան առնուել յատուկ նիստ գումարելով: Բողոքագիրը կատարելիք թէ քանի որ տրոյց բաշխման ցուցակը դեռ պատրաստուած և երեսփոխանական ընտրութեան մասնակցողաց թիւը սրտումած չէ, քուէարկութեան գործողութիւնը պէտք է առ կախ մնայ:

Ընտրողական ժողովը սոյն առարկութեան պատասխանեց թէ տրոյց բաշխման գործը ընտրողական ժողովոյ չվերաբերիր և թէ Վարչութիւնը որ նոյն ցանկին պատրաստեալ ըլլալը կամ չըլլալը իրատ աղէկ դիտէ, զի գործն ըստ սկզբան իրեն կը վերաբերի, ստիպողական հրաման իրկած է ընտրութիւնը փութացնելու, պատասխանատու թողալ ընտրողական ժողովը, եթէ այս մասին ու է պատճառաւ անխոյժ գտնուի. հետեւաբար ընտրողական ժողովը իր գործողութիւնը շարունակեց, ընտրութիւնը դադրեցնելու չափ գորուոր պատճառ մը չը կըրնալով համարիլ զայն բողոք:

Աւստի Մարտ 6 կիրակի օր Մայր եկեղեցւոյ Ս. Խաչի կողմը ժամը 1ին նախնական գործողութիւններն ընելով ի ներկայութեան մեծագոյն մասի անգամոց, քուէարկութիւնն սկըսաւ և մինչև ժամը 4 տեկց, որ ատեն քուէարկութիւնը դադրելով, քննութեամբ տեսնուեցաւ որ 520 ընտրողներէն միայն 203ը մասնակցած էին ընտրութեան, որոց 106ը անձամբ բերած և 97ը նամակաւ զրկած էին իրենց քուէները: Անմիջապէս քուէհամարի գործողութիւն եղաւ և քուէից բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուեցան

Մեծ. Բարթոլ էֆ. Քիւրքճիպաշեան
Սեղանաւոր Գուճաբայի
» Յովակիմ էֆ. Ֆէնէրձեան
Վաճառական Գուճաբայի
Մնացեալ երկու երեսփոխանաց համար համեմատական քուէարկութիւն ընել հարկ ըլլաւ:

լով, առաւելագոյն քուէ ստացող հետեւեալ 4 անձանց փրոյց ըստ կրկնապատիկ թուոց, որք են

Մեծ. Ատովմ էֆ. Տէրոյենց քուէ 104
» Գէորգ » Ապտուլահ » 92
» Սարգիս » Պօշնակեան » 74
» Կարապետ » Իւթիւձեան » 53

Ընտրութիւնն կատարուեցաւ յաջորդ կիրակի օր Մարտ 13 ի ժամ 1—4 Մայր Եկեղեցւոյ Ս. Խաչի կողմը: Այս անգամ՝ 520 ընտրողներէն միայն 201ը մասնակցեցան ընտրութեան, որոց 86ը անձամբ բերած և 115ը նամակաւ իրկած էին իրենց քուէները: Ժամը 4 ին քուէհամարի գործողութիւն կատարուելով, քուէից առաւելութեամբ երեսփոխան ընտրուեցան

Մեծ. Ատովմ էֆ. Տէրոյենց Գրող. Իւսիտ.
» Գէորգ » Ապտուլահ Լանկ. Բրց.
Սոյն ընտրեալ չորս երեսփոխանաց Սահմանադրութեան 66 և 67րդ յօդուածոց սրահանջած ընտրելութեան հանգամանքներն ունենալը և նոյն յանձնառութիւնն ասրահովեալ ըլլալը այսու տեղեկագրով Ձեր Սրբազնութեան ծանուցանելով և խնդրելով որ զսոյն տեղեկագիր Ա. Ղ. Երեսփ. Ժողովոյ ներկայացնել բարեհաճիք ի վաւերացումն. Մնամբ

Ձեր Բարձր Սրբազնութեան ամենախոնարհ
18 Ապրիլ 1877 ծառայք
Գուճաբայի Նախագահ
Ընտր. Ժողովոյ երկու միացեալ թաղից
ՍՈՒՔԻԱՍ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ
Ստեփանոսի Ստեփանոս
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Յ. ՖԷՆԷՐՁԵԱՆ

ԲՈՂՈՒՄԻՐԻՔ
Գուճաբայի բաղն

Առնապատիւ Ս. Պատրիարք Հայր
Նախագահ Ա. Ղ. Կեղր. Վարչութեան
Մայր եկեղեցւոյ, Կէտի քաշայի և Գուճաբայի դրոյ միացեալ թաղից հրաժարեալ չորս երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութիւն կատար-

ուելու համար կեղծ Վարչութեանը կողմէն առ թաղ. Խորհուրդն եկած հրամանին համեմատ թէ և ընտրութեան ձեռնարկուած է, սակայն ընտրական գործողութեան մէջ օրինական թեւութիւն գտնուած ըլլալով թաղեցւոյս կողմանէ բողոք մը մատուցուած է առ Ընտր. Ժողովն եւ ինչ միացեալ թաղից. յիշեալ օրինակը բողոքոյն ՚ի պատասխան Ընտր. Ժողովն առեւնայեալն էր յայտարարէ այս առաւօտ թէ քրտ հըրտմանի Ամեն. Ս. Պատրիարք հօր քուէարկութիւնը որ և է պատճառաւ չկրնար յետաձգել. հետեւաբար ձեր բողոքը գրութիւնը քուէհամարի գործողութեանէն ետեւ անոր տեղեկագրոյն հետ Վարչութեան մատուցանել որչեցիք:

Սակայն բողոքարկութիւնը վերջնական կերպով որոշած ըլլալով այս տեսակ ապօրէն ընտրութեան դէմ մեր բողոքանաց վրայ անդրդուելի մնալ, ընտրութիւնը աւարտելէ ետեւ ընտրելեաց անձնատիրութիւնը չը վիրաւորելու համար պարտաւ պատշաճ կարգադրութիւնը նախապէս ընելնիդ զեկուցանել հարկ կը համարինք ներկայիս:

Առ ընտրողական ժողովն մատուցուած բողոքը պատճէնը ներկայեաց մատուցանելով Ձեր ըրդ Ամենապատիւ Սրբազնութեան.

5 Մարտ 1877

Մնամբ

Կ. Պօլիս. Ամենախոնարհ և ամենահնազանդ թաղեցիքս Երկր մնացեալ թաղից [11 Ստոյազրութիւնք]

Արժանապատիւ Կաթողիկոս Ընտր. Ժողովից միացեալ թաղից Մայր Եկեղեցւոյ, Կէտիկ բաշայի և Գումգարու գրտի.

Մենք ստորագրեալքս կը բողոքեմք կատարուած քուէարկութեան դէմ. նկատելով որ արոց բաշայման ցուցակը զեռ պատրաստուած և ըստ Սահմանադրութեան 65րդ յօդուածոյ՝ երեսօտ խոնարհան ընտրութեան մասնակցողաց թիւը որոշուած չէ:

Ուստի կ'առաջարկեմք, մինչև որ մեր արդար և օրինական արհանձնաւն ի գործ դրուի, քուէարկութեան գործողութիւնն առ կախ մնայ: Իսկ եթէ անընդունալ մնայ մեր այս բողոքը

պատասխանատուութիւնն Ընտր. Ժողովն վրայ կը մնայ:

4 Մարտ 1877 Մնամբ յարգանք

Գումգարու Երկր միացեալ թաղից թաղեցիքս [11 Ստոյազրութիւնք]

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր Կաթողիկոս Աղգ. Կեղր. Վարչութեան Բաղարնկան Ժողովն.

Մայր Եկեղեցւոյ՝ Կէտիկ վաշայի և Գումգարու գրտի միացեալ թաղից Երեսօտ խոնարհան ընտրութեան դէմ թաղեցւոյս կողմանէ Մարտ 4 թուականու բողոք մը մատուցուած էր առ Ընտրողական Ժողովն. սակայն ըստ օրինի զայն Կեղր. Վարչութեան նկատողութեանն ենթարկած չ'ըլլալով՝ Մարտ 5 թուականու Ձերք Բարձր Սրբազնութեան զխնայինք պարտաւ պատշաճը անօրինել խնդրելով:

Բայց ցաւօք սրտի տեսնելով որ Ձեր Սրբազնութիւնը զայն իրրեւ կուտակցական խնդիր նկատելով հաշտութեան միջոցներու զխնայ, հարկ համարեցինք վերստին զխնել և բողոքել ներկայիս՝ սինդելով թէ մեր խնդիրը Սահմանադրական խնդիր է և ոչ կուտակցական. և կը խնդրենք որ զայն Բաղ. Ժողովն ուշադրութեանը ներկայացնելով, անոր որոշմանն ենթարկել բարեհաճիք մեր առարկութիւնքն սրբ են՝

Կաթ. Աղգ. Երեսօտ. Ժողովն արդէն արոց բաշայման խնդիրն որոշած ըլլալով՝ որոց որոշմանքը նոյն խնդիրն են՝ չորս ամսէ ՚ի վեր թաղիս մէջ կաղմուած արոց բաշայման Մասնաժողովն բոլոր ջանիցն հսկառակ տակախն արոց բաշայման գործադրուած չէ, որով Սահմանադրութեան 65րդ յօդուածոյ արամադրութիւնը ներկայ ընտրութեան մէջ շարաշար գործածուելու տեղի արուած է. վասն զի 100ի մօտ ընտրող նշանակուած են՝ որոց զրեթէ մեծագոյն մասն անկարող գտնուած են ցարդ վճարելու և ոչ խնայ այժմ ոչ կարողութիւն և ոչ յօժարութիւն ունին յիշեալ յօդուածոյ արամադրած գոնէ 75 զրդ Կեղր. սուրբը վճարելու:

Բ. Որով ըստ օրինի քուէարկութեան մասնակցելու իրաւունք ունեցող անձանց իրաւանցը

դէմ զեղծում մ'եղած է՝ սահմանադրապէս երեսօտ խոնարհան ընտրութեան մասնակցելու իրաւունք չունեցող անձանց բաղմութիւն մը բուէի մասնակցելով:

Գ. Մեր բողոքը ժամանակին (քուէարկութեան տուած) նկատողութեան առնուած չ'ըլլալով իրրեւ բողոքարկութեան քուէարկութեան մէջ ձեռնարկ ձեռնուած հարկին տակ մեր ընտրական իրաւունքը կտարուած է նոյնին չը կարենալ մասնակցելով:

Գ. Ինչպէս որ քուէարկութեան մասնակցելու իրաւունք չ'ունեցող բաղմութիւն անձինք նոյնին մասնակցած են հսկառակ Սահմանադրութեան, նոյնպէս ալ միացն 75 զրդ վճարելու կարողութիւն ունեցող այլ նոյն խնդիրը գտնուած խնայ մ'անձինք հրաւիր ընդունած չեն մասնակցութեան, և ոչ հրաւիրակցին թերթերու միջոցաւ ծանուցումն եղած է, որպէս զի խնայած ըլլալով կարենան յիշեալ անձինք իրենց իրաւունքը գործադրել:

Աղգ. Սահմանադրութեան սկզբունքն պարտուց և իրաւանց սկզբունքն ըլլալով՝ այս սկզբունքը կ'եղծանի ներկայ ընտրութեան բաղմութիւն անձանց սահմանադրապէս անհատական իրաւունքը կտարուելով՝ հսկառակ հիմնական ընտրանց Ա. յօդուածոյ Սահմ:

Հետեւաբար կը խնդրենք պատկառելի ժողովից որ բարեհաճի մեր սոյն բողոքը նկատողութեան առնուել և Սահմանադրութեան 65րդ յօդուածոյ արամադրութեան գործադրութիւնն սպառնալի ՚ի շինութիւն մեր անհատական իրաւանց, այն Սահմանադրութեան՝ որոց ամբողջութեան գործադրութեանն հսկել սարսք կը գնէ Ս. Պատրիարք Հօր վրայ նոյնին 8րդ յօդուածը:

Մնամբ Բողոքարկութիւն Մայր Եկեղեցւոյ՝ Կէտիկ բաշայի և Գումգարու գրտի միացեալ թաղից Երեսօտ խոնարհան ընտրութեան

14 Մարտ 1877 [21 Ստոյազրութիւնք]

Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտողութիւն ունեցող կա՞յ մի:

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Գիտողութիւն ունիմ, երկու երեք բողոքարկիր կան, զորս ստորագրողները գրեթէ միևնոյն անձինք են. կը բողոքեն թէ արոց բաշայման ցուցակը չպատրաստուած քուէարկութիւն կատարուել է, իրաւանցի խօսք մ'է սոս. սակայն իրենց վերաբերեալ բան չէ. սամք կամ իրաւունք ընտրող են և կամ չեն. եթէ են՝ պէտք էին մասնակցիլ քուէարկութեան ապօրինաւորութեան կողմը գէթ տկարացնելու համար. օրինաց նախանձախնդրութեանը ձեռնարկ գտնուելով սարտազանց կը համարուին. իսկ եթէ ընտրող չէին՝ բողոքելուն շարժառիթը նախանձն է, բայց ս'չ վասն բարեց Աղգին, զի իրենց բողոքով ըսել կուզեն թէ խնայ ուրիշներն քուէարկութեան մասնակցելու կրնաւունքին և մեր ս'չ: Բայց սակէ միթէ չէ՞ր կրնար Վարչութիւնն որ տարիէ մը ի վեր սրաշտօն կը վարէ, ընտրուող ցուցակներուն պատրաստութեան համար ամեն թաղ հրահանգ գրիւել և գործադրել տալ ժամանակին, չգործադրողներն իրրեւ ընկառապատժել կամ Աղգ. Ժողովն առջև ամրատանել. եթէ կանխաւ չիրցաւ ընել, գոնէ սոս վերջին երկու ամսոց մէջ ալ չէր կրնար ընել. բայց չէ կրցեր ընել. ևս առաջինն եմ հաւատարմեքէն՝ որ չէ կրցեր ընել, վասն զի չեն մըտիկ ըրեր զինքը. ուստի քանի որ նո չէ յաջողեր, կամ թաղ. Խորհուրդը յանցաւոր են և կամ Վարչութիւնն անկարող. մեր ի՞նչ իրաւունք ընտրեալ երեսօտ խոնարհանքը մերժեմք. սախ սարգապէս մկուռն յանցանքին համար ուրիշ մը սրատժել ըսել է, որ արգարութեան հակառակ է: Ուստի կ'առաջարկեմ որ բողոքուող բարի նախանձը մէկդի թողլով ընտրութեանց վաւերացումը կատարենք:

ՁԱՅՆԵՐ. — Բու՛, բու՛:

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուզեմ:

[Արեւիք]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բանի որ քուէ մայնողներ կան, պէտք է Ժողովին հարցնեմ թէ

Վիճարանութեան շարունակութիւնը կուղէ՞ թէ ոչ :

Չայս ըսելով Ատենապետ Էֆէնտին բուէի դրաւ վիճարանութեան վակոււմը՝ փորձով և հաւատարմով : Ժողովը փակուան ՈՐՈՇԵՑ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Կը բողոքեմ, Ատենապետ Էֆէնտի, փասն զի կանոնը բուէի դրիք. ըստ կանոնի թեր ու դէմ պիտի խօսուի, թեր խօսող եղաւ, ևս ալ դէմ պիտի խօսէի. և խօսքը զըսցար ինձ :

Ատենապետ Էֆէնտի բուէի դրաւ Մայր Եկեղեցւոյ և միացեալ թաղից ընտրութեան տեղեկագիրը, զոր Ժողովն 2 բուէի դէմ մեծամասնութեամբ ընտրութիւնը և վաւերացուց կատարուած ընտրութիւնը :

Հեռուաղէս երեսփոխան ՀՈՉԱԿՈՒՆԵՑԱՆ

- Բարթող Էֆ. Քիւրքճիպաշեան |
- Յովակիմ » Յէնէրճեան
- Ատովմ » Տէրցեան
- Գէորգ » Ապաուլաշեան

Չորրորդ՝ Թորգարու թաղին ընտրական տեղեկագիրը և ընդ նմին Թաղ. Խորհրդոյ զետողացիրը կարգացուեցան, որք են՝

Բարձրաշնորհ Սրբազան Հայր

Ըստ Բարձր հրամանի Սրբազնութեանդ թաղիս մի երեսփոխանի ընտրութեան գործադրութեան ըստ օրինի ձեռնարկելով և ի լրագիրս հրատարակուելով, նոյնպէս ընտրողաց և ընտրելեաց ցանկերը Ս. Եկեղեցւոյս գաւիթը կախուելով քուէարկութիւնը տեղի ունեցաւ անցեալ Կիր. Ծաղկազարդի օրը ի խորհրդարանի Թաղ. Խորհրդոյ և ի ներկայութեան անդամոց Ընտ. Ժողովոյ :

Ութսուն թաղեցի ընտրողներէ միայն 20 անձինք մասնակցեցան քուէարկութեան, յորոյ 16 քուէք Ղարսթիացի Յովհաննէս Էֆէնտի Մարգարեանի անուանը ըլլալով, հետեւաբար սոյն

անձս բացարձակ առաւելութեամբ թաղիս կողմանէ երեսփոխան ընտրեցաւ :

Սրբազան Հայր, վաւերացնելով սոյն ընտրութիւնս կ'ինչորեմք որ ի պաշտօնէ բարեհաճիք պէտք եղածը աղջարարել առ սոյն Էֆէնտին :

Որով Մնամ

Չերումի Բարձր Սրբազնութեան Ամենախոնարհ և Ամենահազանդ ծառայք

Ի զիմաց Ընտ. Ժողովոյ Նախագահ
 23 Մարտ 1877 ՏԻՄՈԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ
 Ի Թորգարու ՀԱՆԷՍԵԱՆ
 Ատենաղայիր Ատենապետ
 Խ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԴԻՏՈՂԱԳԻՐ

Ամենապատիւ Սրբազան Հայր

Թաղիս երեսփոխանական ընտրութիւնը սրբն որ Ծաղկազարդի կիրակիէ օրն տեղի ունեցաւ՝ սոյն ընտրութեան մասնակցող անձինք յետոյ խորհրդոյս ներկայանալով 76 զրուշ Աղղային տուրք տալու անկարող ըլլալին յայտնելով իրենց քուէները ետ կուզեն. որուն աղագաւ թաղեցիք բողոքած են մեզ պատճառելով որ իրենք ալ պէտք է որ քուէի մասնակցին քանի որ անկարող անձինք մասնակցած են :

Ուստի ահա եղելութիւնը իմացնելէ յետոյ սրարտուարաշաճ տնօրէնութիւնը Ձեր Բարձր Սրբազնութեանը կը թողունք :

Ի զիմաց Թաղ. Խորհրդոյ
 Ատենաղայիր Ատենապետ
 Խ. ՎԱՐԴԱՆԵԱՆ Ս. ՄԷՏԻԱՆԷՃԵԱՆ

Ի խորհրդարան Ս. Նիկողայոս
 Եկեղեցւոյ Թորգարու
 1877 Մայիս 5

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Դիտողութիւն կա՞յ մի :
 ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՅ. — Չեմ գիտեր ի՞նչ պէս եղեր է կամ ո՞վ զրդեր է Թորգարույի ընտրողներն՝ որ քուէին ետ ուզեն, ինչպէս կը

17 Մարտ 1877 'ի Պարտոս

Ս.մեն. Ս. Պատրիարք Հայր Նախագահ Ա.դդ. Երեսփոխանական Ժողովոյ :

Թաղիս Ա.դդ. Երեսփոխաններէն մին հրաժարուած ըլլալով Ձեր բարձր Սրբազնութեան կողմանէ ընդունած հրահանգին համեմատ և ըստ արամաղութեան Ա.դդ. Սահմանադրութեան Ընտրողական Ժողով կազմելով, ընտրողաց զիրութեան համար երեք ընտրելի ներկայացուցիչք Երեսփոխանի քուէարկութեան մասնակցելու իրաւունք ունեցող թաղեցւոց. և Մարտ 6ին քուէարկութիւնը կատարելով եկած 57 քուէէն 24ը Արշակ Էֆէնտի Յակոբեան, և 15 քուէ Թաղէոս Էֆ. Թերքանեան ստացան. իսկ մնացեալ քուէները այլ և այլ անձանց բաժնուած էր. հետեւաբար սոյն քուէարկութեամբ բացարձակ առաւելութիւն չ'գոյանալով Վարկ եղաւ երկու առաւել քուէ ստացող Էֆէնտիներու, սոյն է Արշակ Յակոբեանի և Թաղէոս Թերքանեանի վրայ վերստին քուէարկութեան գործողութիւնը կատարել, որպէս զի բացարձակ առաւելութիւն ձեռք բերուի :

Առ այս Մարտ 13ին վերստին քուէարկութեան ձեռնարկելով, եկած 101 քուէէն 67 Թաղէոս Էֆ. Թերքանեան, և 31 քուէ Արշակ Էֆ. Յակոբեան ստացան. հետեւաբար Թաղէոս Էֆ. Թերքանեանը քուէից բացարձակ առաւելութեամբ Պաշտու թաղիս երեսփոխանը կը համարուի, որուն հաճութիւնը յետ քուէարկութեան տունուած է նամակաւ :

Ահա մեր գործողութեան արդիւնքը տեղեկագրելով կը մատուցանեմք Ձեր Բարձր Սրբազնութեան 'ի տնօրէնութիւն :

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
 ՄԻԻԹԱՐԵԱՆ
 Ատենաղայիր Ատենապետ
 Ա. ԳԱՐԱՄԱՃԵԱՆ ՄԿՐՏԻՉ ՅՐԷՆԿԵԱՆ

Ժողովն առանց դիտողութեան ընտրողաց սոյն տեղեկագիրը, և երեսփոխան ՀՈՉԱԿՈՒՆԵՑԱՆ Թաղէոս Էֆէնտի Թերքանեան :

յայտնէ Թաղ. Խորհրդոյ զիրը. սակայն բան մը կայ՝ զոր աչքս տեսայ Ալլամիէ թաղին մէջ. թուղթ մը կ'աղարտեմք ընտրութիւն եղած ժամանակ՝ 75 զրշ տուրք չտուողներէն ստորագրել տալու համար, և ստիկա ընտղները Վարչութեան Տնտես. Խորհրդոյ մէջէն կամ դրան անձինք էին : Կերևի որ Թորգարույէն եկած այդ զիրն ալ այսպիսի զրգման մը արդիւնք է, զորմանքս կ'յայտնեմ :

ՍՏԵՓԱՆ ՓԱԵԱ. — Ես զսրմանք չեմ

յայտներ. քանի որ Վարչութիւնն պաշտօնական ցուցակ չ'է պատրաստած, այսպիսի անտեղութիւնք տեղի կ'ունենան Բայց նշանաւոր կէտ մը կայ, անոր վրայ կուզեմ ձեր ուշադրութիւնը գրաւել : Թորգարույի թաղական խորհրդը որ Ընտրողական Ժողովի մեծ մասը կը կազմէ, 75 զրշ տուրք տալու անկարող թաղեցիներէն քուէ կը մուրայ, Երեսփոխանի ընտրութիւն կը կատարէ, և տեղեկագիր կ'ստորագրէ, ինչ մը վերջը իր տեղեկագրին հիմը քանդող բողոք մը կ'ընդունի թաղեցիներէն, սոյն ալ չ'ամշնալով մեզ կը հաղորդէ երկրորդ տեղեկագրով մը ինչ տեսակ թաղական խորհարդ է այդ. ըստ իս՝ ասանկներուն զիրն ալ խօսքն ալ մերժելի է : Ուստի կառաջարկեմ որ այս ընտրութիւնն ալ վաւերացուի և ասպաղային զգուշութիւն ըլլայ այս տեսակ ընտրական գործողութիւններն այս տեսակ անձանց չը յանձնել :

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, Թորգարույի ընտրական տեղեկագրին ալ քուէի դըրուեցաւ և ընտրուեցաւ Ժողովին :

Հեռուաղէս երեսփոխան ՀՈՉԱԿՈՒՆԵՑԱՆ
 Յովհաննէս Էֆէնտի Մարգարեան Ղարսթիացի :

Հինգերորդ՝ Պարտու թաղին ընտրութեան տեղեկագիրը կարգացուեցաւ, որ է .

Վնչերորդ՝ Մալաթիոյ վիճակին Գաւա-
ռական երեսօտական ընտրութեան տեղեկագրի-
րը կարգացուեցաւ, որ է՝

Ամենապատիւ Ս. Հայր

Ազգային Ժողովոյ երեսօտական ընտրու-
թեան մասին Մարտ 4 թիւ գրուած ազգարա-
րական նամակինդ ստանալով՝ Ձեր Բարձր հրա-
մանին համաձայն անմիջապէս տեղւոյս Ազգ.
Ժողովն դուժարելով բոլոր ժողովոյ և համայն
ազգայնոց հաւանութեամբ մասնական ժողովոյ
պատրաստած հրահանգին համեմատ բուժարկու-
թեամբ Թօփալ Վարդանեան Գէորդ Էֆէնտին
որ Կ. Պօլս և ընկալի, որոշեցինք Ձեր հրաման-
ները կատարելու. ինքն Մալաթիոյն է ու
զվտար ազգայիններէ։

Որով մնամք Ձեր անդին կենաց աղօթող .
1877 Ս.պրիլ 1 Ն. ՍՐԱՊԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մալաթիա

Ստեփանոս

ԳՐԻԳՈՐ

Ստեփանոս

ՄԻԲԱՅԷԼ

ԹԻՖԹԻԿՃԵԱՆ Տ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Ժողովն առանց դիտարկութեան ԸՆԴՈՒՆԵՅ
այն տեղեկագիրն ալ, և երեսօտական ՀՈԶԱԿ-
ՈՒՆԵԱԿ Գէորդ Էֆ. Վարդանեան։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեսօտական ընտ-
րութեանց վաւերացման գործողութիւնն ընկաւ.
ըստ Օրակարգի՝ Մայր Գիւանին կազմութեան
գործն ունինք։ Արտառաջարկեմ յաջորդ նըս-
տին Թաղու այս գործն, որպէս զի նորընտիր
երեսօտանք ալ ներկայ գտնուին։

ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Կանոնա-
դրութիւնն ինչ որ արամազդէ որ ընտրութեանց
վաւերացման գործողութեանն ետե նոյն նախին
Մայր Գիւանի կազմութիւնն ալ կատարուի և
թէ ժամանակ կայ, և եթէ ժամանակ չկայ,
յաջորդ նստին մնայ, թէպէտե առարկող կայ որ
նորընտիր Երեսօտանք պէտք է ներկայ գըտ-
նուին, որպէս զի Ժողովն անոնց մէջէն արժա-
նաւորներն ի պաշտօն կընէ, պիտոյն ևս կը կար-

ծեմ թէ Ժողովն նորընտրելոյ դէմը տեսնե-
լով անոնց անձնական հանդամանաց համար քը-
ւէ պիտի չտայ, այլ արդէն ամենին կը ճանչ-
նանք Ազգին մէջէն այս տեսակ պաշտօններու
արժանաւորները և անոնք կընտրենք. ուստի
կառաջարկեմ որ քանի որ ժամանակ ունինք,
ընտրութեան սկսինք և Գիւանն ինչ կազմենք։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժամն 9 քաւորդ ան-
ցած է. դեռ ևս ժամանակ ունինք։

ԶԱՅՆԵՐ. — Ուրեմն սկսինք՝ ընտրութիւնը
կատարել։

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՆ ԷՖ. — [Յանուկ
Քոյ. Ժողովոյ] Երեսօտական ընտրութիւնը
վաւերացան, սակայն մեր ծանուցագրին մէջ
կէտ մը կար Ժողովոյն ուշադրութեանը յանձ-
նուած. այն է 75 դրէ արոց խնդիրը. սնտու-
կին վնաս կը ծագի եթէ այս մասին տնօրէնու-
թիւն մը չըլլայ. կաղտնեմ որ Ժողովն իր
պաշտօնը յայտնէ մեզ։

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Քաւարկութեան
մասնակցողոց 75 դրէ տուրքը կարենալ հաւա-
րելու խնդիրն է նէ, ևս ի՞նչ ատենարանու-
թեանս մէջ այդ մասին ըսի որ այս անգամի
ընտրութեանց մասնակցողներն 75 դր. տուրք
տալու անձանց տուժարն անցնին այս տարուան
համար։ Կործեմ այսքանը կը բուժէ։


Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Կանոնադրութիւն-
ն ինչ կը սահմանէ որ նոր ընտրութեանց վաւե-
րացումն ետե անմիջապէս Մայր Գիւանի
ընտրութեանը ձեւնարկուի. բայց Քաղ. Ժո-
ղովը ուրիշ նոր խնդիր մը կը յարուցանէ սըն-
տուկին վնաս կը ծագի ըսելով։ Պատասխա-
նեմ. երեսօտական ընտրութեան մաս-
նակցողոց արոց բաշխուի ու հաւաքումը տար-
բեր բաներ են. ինչո՞ւ իրար կը չփոթէք.
Կուսութեան էֆէնտի խօսքը՝ երեսօտականի մը
կործիր է և ոչ Ժողովին որոշումն։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը ձայնակցիմ
Մատթէոս Սրբազանին։

ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ. — Վարչու-
թեան առաջարկութիւնն որչափ կարեւոր՝ այն-
քան ծածկ է, առանց դիւանն ունենալոց ստանկ
ծածկ խնդրոց մը վրայ չենք կընար խօսիլ.
պէտք է որ դիւանն ինչ կազմուի էտե այսպիսի
խնդիրներ ներկայացուին. առ այժմ պէ՛տք ու-
նինք՝ որ 75 դրու տուրք տալու կարողութիւն
ունենալները բուժ պիտի տան, զայն հաստատու-
կեմք և առաջադրեն չէլիս զործողութեան պատ-
ուէր կատարել Վարչութեան, այդ բաւական է։

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — Փաշային ըսա-
ծին պէս նոր խնդիր մը չէ մեր բերանը, այս ան-
գամու կատարուած ընտրութեանց առթիւ զիտու-
ղութեան կէտ մը ցուցեր ենք. թէ որ այսոր
կարեւոր չէ նկատուութեան աւանդ, և ետքի
մնալ արժան կը գտնուի, թա՛ւ Ժողովը պաշ-
է արձանագրել առայ. այդ ալ կը բուժ մեզ։

ԶԱՅՆԵՐ. — Թա՛ւ արձանագրուի։



ԿԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԳԻՒԱՆԻ

Ըստ կանոնի Առաջին ատենագրութի ընտ-
րութեան համար Գիւանը բուժարկներ բաժնելով
հրահանգ երեսօտականներն ի բուժարկութիւն։
Քաւարկութեան քննիչ կարգեցան վիճակու.

Յովհաննէս Էֆէնտի	Յովակիմեան
Մկրտիչ	Լասեան
Կարապետ	Խաթիւնեան
Ստեփան	Փափաղեան

Քաւարկութիւնը կատարուելով բուժհամա-
րըն սկսաւ։

Այն միջոցին Սրբազան Կաթողիկոսը՝ որ
տերազմական ծախուց օգնութեան յանձնաժ-
ողովոց ծանուցագիրը ներկայացնելով և յայտնե-
լով որ այս մասին կանխա Պատրիարքարան
գրուած տոմարաց գիրը կը սահմանուի, և
թէ նոյն տոմարները թէ և թաղ. խորհրդոց

ցրուած է հասարակ համար, բայց մինչև ցարդ
հասարակ եղած չըլլալով՝ տոմարները իսկ ևս
եղած են, առաջարկեց որ Ժողովն ինչ ընէ
այս հասարակ իր մէջէն և հասարակոց գումար-
ըն Պատրիարքարանի միջոցաւ յանձնուի օգնու-
թեան յանձնաժողովին յանուն Ազգային ժող-
ովոյ։

Արտարան նախագահը Ժողովոց գումարու-
նէրն ի Պատրիարքարան ընկաւ մասին ի սրբա-
րան ըրած առաջարկութիւնը վերադին կրկնելով
Ժողովին ուշադրութիւնը հրահանգ այս մասին։

ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ (քննիչ խնդրով).
— Մինչև որ Քաւարկութեան կատարուի, կընտրեք
Արտարան Պատրիարքի կրկին առաջարկութեանց
վրայ խորհրդանէ և վիճարանէ. նախ Ազգ-
ժողովոց նստերան ասիէ էտե Քաւարկութեան Ազ-
գային Պատրիարքարանի մէջ ըլլալու խնդրոց
վրայ այս բե՛նէն կը յայտարարեմ որ մեր Ազգ-
րարան Հոր մասնաւոր շնորհակարտութեան պէտք
է յայտնէ Ժողովն որ չորս ֆինգ գորէ ի վեր
Ազգիս արձանագրուած եղող Գումարութի
Պատրիարքարանն . . .

ԻԹԻԻՏԵԱՆ Կ. ԷՖ. և ԱՅԼԳ. [Քննիչի-
լով] — Ոչ, ո՛չ, հարիւ 120 տարի կոյ Պատ-
րիարքարանի ի Գումար հաստատուիլը։

ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ — (չարուանկելով) Եստ շնոր-
հակար էմ որ իմ սխալա ուղղելու առթիւ մեր
Ազգ. Պատրիարքարանի գորաւոր կայութիւն
մը ունենալը հաստատուելիք. արդ այսպիսի Պատ-
րիարքարան մը որ Պատրիարքարան աթոռա-
նիստ Մայր Եկեղեցւոյ դէմը հաստատ ընդոր-
ձակ փոտաւոր կնշած ըլլալով, վէջ ետի՞ տարիէ
ի վեր ժողովներն ու խորհուրդներն առտանդու-
կան կը թափառին, ազգային տուժարներուն տե-
ղէ տեղ փոխադրութեան համար մեր սխալէին
մէջ 3—4000 դրէ ծախուց գումար մը կը սա-
մանուի, անգին Պատրիարքարանն տնտէր մնա-
լով, մինչև իսկ փողոցի կենդանիներ վերի յար-
կէ կը ըլլին, առգին նորահաստատ մասնաւոր

գարանի մը մէջ ժողովներ և խորհուրդներ գումարուելու խնդիր և շփոթութիւն կը ծագի. ահա այս ամեն անկարգութեանց բարձման համար Սրբազան Պատրիարք Հօր բոլոր ժողովներն ու խորհուրդները 'ի Պատրիարքարան գումարուելու առաջադրութիւնը ստուգիւ շնորհակալեաց արժանի է. այս, կը վայել և պէտք է որ մեր Պատրիարքարանն իր անշքացեալ վիճակէն վերահանգնի, Պատրիարք, Ժողով, խորհուրդ, զիւստիապէս, դատարան, ամենն ալ Ազգին սոցալոսոնական դարաւոր և նուիրական տունն համախորհիւն և ամեն շփոթ և տաղաւոյ վերնան մեր մէջէն: Սակայն Ազգ. ժողովը նստելուն համար կը սրբապատրիւմ բացատրի խորհրդածութիւն մը ներկայել Չեզ: Մեր Կանոնադրութիւնը որու ճակտին վրայ «հրամանաւ Բարձրաշնորհ Ներսէս Պատրիարքի խորհրդեաց» կը կարգուի, և զոր ևս ժողովն անդամ չ'եղած դուք ընդունելու էք միահամուռ ծափահարութեամբ, ժողովն համար կը տրամադրէ որ «Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ նիստ ընէ»: Բայց աստի՛ Ազգ. ժողովըս 140 անդամներէ կը բաղկանայ և Ղարչութեան անդամներէն զատ, ժողովրդէն 120—150 և աւելի շատ ունկնդրաց ներկայութիւնը կը վայելէ. այսքան մարդոց երթեկուցութեան և դումարման դիւրութեան համար Ղալաթիոյ կեղծական դիրքը աւելի սրտաշան չ'ի: Կաև Ազգ. ժողովն Պատրիարքարանի շէնքին մէջ չ'կրնար գումարուիլ, հարկաւ Եկեղեցւոյ մէջ պիտի ժողովի. ուրեմն ինչ հարկ Ղալաթիոյ Եկեղեցիէն Մայր եկեղեցին վախաւորելու ժողովակներ և ունկնդիրք: Այս խորհրդածութեամբ կ'առաջարկեմ որ ժողովն շնորհակալութեամբ ընդունի Սրբազան Հօր առաջադրութիւնը թէ այսուհետեւ բոլոր ժողովներն ու խորհուրդները 'ի Պատրիարքարանն պիտի ժողովին և բացառութիւն ընէ միայն Ազգ. ժողովն համար, զայն ըստ կանոնաց Ղալաթիա գումարուել սրտելով:

Կարծի Սրբազան Հօր երկրորդ խնդրոյն՝ ևս կը հաւատամ որ ամենուս սրբաբնէ Տէրութեան աս նեղ միջոցին օղնել ըստ կարի, զէթ գրտնական նարսասիր, սակայն հարկ չ'կայ ըստ

խ միայն Ազգ. ժողովն վրայ ծանրանալ, աւելի բանաւոր է որ Սրբազան Պատրիարքը Ազգայնոց բոլոր երեւելիները առանձին առանձին հրաւիրէ, և ամեն մեկէն ըստ շարի կարողութեան նուէր հաւարէ 'ի նպատակ Տէրութեան, ինչպէս որ մեր նախկին Պատրիարքները կ'ընէին այն տեսակ սրբապայլոյ մէջ:

Քուէհամարը կատարուելով հետեւեալ արդիւնքն ունեցաւ.

Թիւ բուհարիւսաց	63
Ստեփան	ժաշա բուէ 56
Աղարէկեան	էՖ. » 5
Նուրեան	» » 1
Երեսուխեան	» » 1

Հետեւապէս 56 բուհիոց բացարձակ առաւելութեամբ առաջին ասենապետ ընտրուեցաւ Ստեփան ժաշան, որ անմիջապէս խոր սրաշտոնին զլուխն անցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Տես՛րք իմ մտանաւոր շնորհակալութիւնս կ'այցանեմ ժողովին՝ որ կարատուէ զիս վերստին առենապետութեան պաշտօնին կոչելով այս երրորդ անգամ. այս կոչումը իմար է ինձ և խրատոյս, վասն զի Սրբազան Պատրիարքը նախագահն ըլլալով հանդերձ, առենապետը կ'ընկալարէ Ազգին ամենէն բարձր ժողովն. ասի մեծ սրտիւ կհամարիմ. խրատոյս է ըսի, վասն զի այսօր կրկին զիս ընտրելով՝ անցեալ պաշտօնաւարութեանս գոհ ըլլալնից կցուցնէք և լուրեայն յորդոր կը կարդաք դարձեալ նոյնպէս շարունակելու. ուստի օժանդակութիւննից խնդրելով կ'ստատանամ իմ պաշտօնս ճշգրտութեամբ կատարել, և անտարակոյս եմ որ դուք ալ ժողովին կանոնաց սրտա կառ կարով ընդհանուր Ազգին շնորհակալութեան կարժանանանք:

Օրը տարածուեալ ըլլալով, չենք կարող սցսօր րացունել Գիւանի ընտրութիւնը. բայց պէտք է որոշում տանք Սրբազան Հօր յուղած տեղական խնդրոյն:

Ըստ որում Սրբազան Հայրը բացորոշ կերպով անկարելութիւն կը յայտնէ այսուհետև Ազգ. ժողովը Ղալաթիա գումարուելու, այս մասին ժողովին կարծիքը հասկընալու համար խօսք պիտի տամ: Բայց ամենէն առաջ սրտա կհամարիմ յանուն Ազգ. ժողովոյ բողբել այն անվայել վարձանց գէժ որով ոմանք յանդգներ են, ինչպէս Սրբազան Հայրն յայտարարեց, քաղարավարութեամբ հեռացունել Կորին Սրբազնութիւնը Ազգային յարկի մը մէջէն:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Սրբազան Հայրը կըսէ թէ կամ Ղարչութեան ճիւղերուն համար ալ հաստեղ ցոյց սրուելու է և կամ Ընդհանուր ժողովն ալ անոնց հետ Պատրիարքարան գումարուելու է: Եթէ Ղարչութեան ճիւղերը Պատրիարքարանն պիտի գումարին, ինչո՞ւ Ազգ. ժողովն ալ չ'գումարի հոն, մինչդեռ Ազգ. ժողովը 15 օրն և երբեմն ամիսն անգամ մը նիստ կընէ, Ղարչութեան ճիւղերն ամեն շաբթու և երբեմն շաբթին երկու կամ երեք անգամ նիստ կը գումարեն և զոհողութիւն կընեն տասնի տաղնուս պովոյ ժամանակի մը մէջ. ինչո՞ւ երեսօտիսաններն ալ չուզեն զոհողութիւն ընել:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նոյն և առաջ պիտի խնդրեմ որ Սրբազան Հայրն իրր նախագահական առաջարկութիւն ինչ որ բերէ, անկարելի բառը կցելով չբերէ, որովհետև այդ ձեւին տակ ժողովն ծանր դիրքի մը մէջ կ'ընէ. ուստի անկարելի բաննեա առնուլ պէտք է. Նորին Սրբազնութիւնը կըսէ թէ անցեալ օր զինքն սրտաբեր են Ղալաթիայէն. ամենէն ծանր բանն է այս. ևս չեմ կարծեր որ Նորին Սրբազնութեան ըսածին պէս տեղի ունեցած ըլլայ այդ գէպը և ընտըն անարտիժ մնայ. եթէ այդպէս է, ըսել է Քաղ. ժողովն անտարբեր կեցաւ այդ մասին. այս ալ կերպով մը Քաղ. ժողովոյ զէ՛մ գանդատ մ'է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրն ասոր վրայ է, Օղաէն է՞Ֆէնտի. Ազգային ժողովոյ նիստը այս տեղ կամ Պատրիարքարան ընելու վրայ է. ասոր վրայ պէտք է կարծիք յայտնել. ձեր ըսածին սրտախանդը տըվաւ Գիւանը. ամենէն կարեւորը ժողովին գումարման տեղն որոշելն է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Գիւանը ժողովին կարծիքը չտանելով սրտախանած է. Սըրբազանը կըսէ թէ զիս Ղալաթիա չընդունեցին, այնպէս չէ. վերարկուի տակ խնդիր չենք ընդունիր. խնդիրն որոշ կերպով թո՛ղ բերէ. բուն խնդիրը՝ Պատրիարքարանը Ղալաթիոյ վարժարանը փոխադրելն է: տեանենք՝ Ղալաթիոյ վարժարանը միանգամայն Պատրիարքարան կրնայ ըլլալ: Մատթէոս է՞Ֆէնտի կըսէ թէ երեսօտիսաններն ալ թող զոհողութիւն ընեն և Պատրիարքարան գան փոխանակ Ղալաթիա նիստ ընելու. մեր հոս Եկեղեցւոյն մէջ նիստ կընենք և զանգակը զարնուածին պէս կ'ձգենք կերթանք. դուք ալ այսպէս տեղ մը գտէք և նիստ ըրէք: Կանոնադրութիւննիս գծած է արդէն մեր նըստելու տեղը. Ազգային ժողովը Ղալաթիա պիտի գումարուի ըսած է. ժողովքով ընդունուած օրէնք մ'է այս մեզի համար. այս օրէնքն՝ որուն ուխտեալ ենք, եթէ պիտի աւրենք և փոխենք, պէտք է վիճարանութիւն բանալ և այնպէս ջընջել կամ փոխել, աստ թէ ոչ կանոնին հընուղանդելով չեմ կրնար Պատրիարքարան գալ. այս է իմ կարծիքս:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱԷ. — Ստեմարան է՞Ֆէնտիին սրտախանդու համար կըսեմ թէ Ազգային ժողովոյ հոս գումարումը Կանոնադրութեան մէջ ընդունելուս սրտախան արն է որ նոյն միջոցին Ղարչութեան ժողովներն ալ հոս կ'գումարուէին և ժողովակներ եկեղեցականօք հանդերձ չէին ուղեր Պատրիարքարան գալ: Այն ատեն ժողովոյ նիստերը Ղալաթիա ըլլայ ըսողներն են՝ որ այսօր ելեր կըտեն թէ Պատրիարքարան գացէք նիստ ըրէք: Նոր չենքին մէկ մաս մ'ալ յաւելուած պիտի ըլլար վարչութեան նիստերուն համար, այդ մնաց. կ'արծէնք որ

արդի չենքին մէջ մեզի հատար տեղ մը կրնանք
ունենալ. ինչպէս որ առաջ ալ հին չենքին մէջ
քանի մը սենեակ ունէինք, որ թէ՛ մեր և
թէ՛ մեր նախորդները կը գումարուէինք: Բայց
հիմա մի քանի անձինք մեզ արտարեւոյթն, և
ես չեմ ընդունիր նեղ խցիկներու մէջ թափա-
ռիլ, ևս որ նոյն ինքն նախարարաց վկայու-
թեամբը նախարարաց կարգը կը համարուիմ.
զուր նիստ ըրած օրերնիդ Քաղ. Ժողովն ալ
նիստ կընէ. չկայ ժողովական մը՝ որ Պատ-
րիարքարան գալ ուզէ. եթէ զուր հաս գու-
մարուիք, տեղ ցուցէք՝ որ Քաղ. Ժողովն ալ
գումարուի: Այսուհետև չեմ ընդունիր որ նոյն
խի Ս. Պատրիարքարան ալ հաս գումարուի. ուս-
տի յանուն Պատրիարքութեան կը սահմանջեմ
որ Պատրիարքարանը գումարուիք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդրոյն գոյնը կը
փոխուի, ինչ բանի վրայ պիտի վիճարանինք. ևս
կը կարծէի որ Սրբազան Պատրիարքը տան Ժա-
ղով Պատրիարքարան գումարուի ըսել կուզէ.
բայց հիմա կըսէ թէ չկայ ժողովական մը՝ որ
Պատրիարքարան գալ ուզէ. անոնք այնտեղ եր-
թալ ուզելու համար Ս. Պատրիարքարան ալ պէտք
է այնտեղ երթայ: Որոշ կերպով հասկցուելու
համար Սրբազանն կը խնդրեմ որ գրով տայ
իւր առաջարկութիւնը, որպէս զի վիճարանու-
թեան հաստատ հիմ ունենանք:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Գիր տալու հարկ
չկայ, ըսածս չհասկցուելու բան մը չէր. հաս-
մարմին մը կայ որ թոյլ չտար մեզ ժողովնիս
հաս ընել. մեր խցիկներու մէջ թափառելու ժա-
մանակ չունինք. ուստի Ս. Պատրիարքարան ար-
շաբան ճիւղերն ալ Պատրիարքարան պիտի
հրատարակ յետ այսորիկ. այսպէս որոշած եմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հրատարակելու
Սրբազան Հայր, եթէ առաջարկութիւն.

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ինչպէս կ'ուզէք,
այնպէս ըմբանեցէք:

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ ԹԱՐՈՒԹԻՒՆ ԷՅ. — Սըր-
բազանն ըսել կուզէ թէ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — [Ինքնիշխան] Հրա-
մանքնիդ Սրբազան Հայր թարգմանն էր, Էփէնտի,
և կամ փաստարանը. տեղերնիդ նախեցէք կ'ա-
ղաչեմ. առաջարկութիւն չկայ, վիճարանութեան
նիւթ ալ չկայ. Սրբազան հայրը կըսէ թէ Ս. Պատրի-
արքարան ալ Պատրիարքարան պիտի տանիմ այ-
սուհետև: Այսինս նախադասական հրատան է,
մեր սարսրն է հնազանդիլ: Եւ որովհետև այն-
պիսի ժամանակի մը մէջ կոտորինք, ուր Տէրու-
թիւնը մեծ տաղնուպի մէջ բըլալ պաշարման
օրէնք հրատարակեց, վտանգի չենթարկուելու
համար կը գոցեմ այս խնդիրը և Սրբազան Հայր
կը յանձնեմ. որ ինչպէս արժան կը դատէ, այն-
պէս տնօրինէ: Ատեանը փոխուած է:

8 օրէն յաջորդ նիստը գումարելու որոշ-
մանը Ատեանը գոյուեցաւ ժամ 10 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ս. Պատրիարքարան
Ս. Պատրիարքարան



ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Խորէն	Եղիսկ	Մխիթարեան	Ա. ԱՏՆԱՊԵՏ
2. Յակոբ	Վարդ	Փափաղեան	Ա. ԱՏՆԱՊԵՏ
3. Գէորգ	Ա. Պ. Ք.	Արծրունի	Բ. ԱՏՆԱՊԵՏ
4. Խաչատուր	»	Տ. Գարրիկեան	Բ. ԱՏՆԱՊԵՏ
5. Գարրիկէ	»	Չիչեքեան	
6. Յովհաննէս	»	Միրեան	
7. Արիտատիկ	»	Քարակեօմբիկի	
8. Պետրոս	»	Փափաղեան	
9. Իգնատիոս	»	Մանուկեան	
10. Գրիգոր	»	Սէթեան	
11. Աթանաս	Քչն	Ս. Խոսէ Երևան	
12. Մեսրոպ	»	Երկրեան	
13. Միքայէլ	»	Պարտու	
14. Զարարիա	»	Բերայի	

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Ասրո	Սահակ	Էփէնտի	Կ. ԱՏՆԱՊԵՏ
2. Շահարազ	Կարապետ	»	Բ. »
3. Նորեան	Յովհաննէս	»	Ա. ԱՏՆԱՊԵՏ
4. Պոյաճեան	Յովհաննէս	»	Բ. »
5. Նորատունկեան	Յակոբ	»	
6. Կիլիկեան	Սէրուբէ	»	
7. Լապեան	Յովհաննէս	»	
8. Ազնաւորեան	Յովհաննէս	»	
9. Սարայեան	Ալեքսան	»	
10. Մաղսուտեան	Սեպուհ	»	
11. Կրճիկեան	Անդրանիկ պէյ		
12. Մարկոսեան	Գրիգոր	Էփէնտի	
13. Քաղաղեան	Յակոբ	»	
14. Զրէնկեան	Յակոբ	»	

ՄԱՍԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1. Գրքի մասին	1
2. Գրքի մասին	2
3. Գրքի մասին	3
4. Գրքի մասին	4
5. Գրքի մասին	5
6. Գրքի մասին	6
7. Գրքի մասին	7
8. Գրքի մասին	8
9. Գրքի մասին	9
10. Գրքի մասին	10
11. Գրքի մասին	11
12. Գրքի մասին	12
13. Գրքի մասին	13
14. Գրքի մասին	14

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՄԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՂՈՂԱԿԱՆ ՍԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱՌՈՒՅ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի . և Ղալաթիոյ Ս
Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայը և Հայ գրաւիւմառաց քով .

